№ 225 ԵՐԵՔՇԱԲԹԻ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 225

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամավանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի 8 ՄԻՆՉԵՎ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրում։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. նոր հասցէները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝
ԿՐ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ՇԱԲԱԹ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՏԻ ԿՈՂՄԻՑ

Թիֆլիսի քաղաքացիներ!

Ամբողջ Ռուսաստանը ապրում է մեծ փորձութիւնների օրեր։ Անհրաժեշտ է բոլոր ոյժերի լարումն։ Եւ եթէ մեր եղբայրները պատերազմի դաշտում քաջաբար պաշտպանում են մեր հայրենիքի պատիւն ու ազատութիւնը և դրանով պանծալի փառք ստեղծում մեր զօրաբանակի համար, ապա մենք, քաղաքացիներս, որ մնացել ենք տանը, պէտք է կատարենք մեր քաղաքացիական պարտքը։ Թեթևացնենք կռւի դաշտում վիրաւորվածի վիճակը, սփոփենք պահեստների ընտանիքներին, պաշտպանենք ցրտից նրանց որբերին։

Քաղաքացիներ!

Հայրենիքը կանչում է մեզանից իւրաքանչիւրին կատարել իր պարտքը։ Յանուն այդ սրբազան պարտքի և մարդասիրութեան Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէտը կազմում է **ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ՇԱԲԱԹ**։

Նուիրաբերէք, ով ինչ կարող է. սպիտակեղէն, ձմերային հագուստ, կօշկեղէն, զգեստեղէն—տղամարդու, կանացի և երեխայի՝ թէ նոր և թէ հին, ով ինչպէս կարող է։ Նուիրաբերէք գլանակ, լուցկի, ծխախոտ, սապոն, ամէն տեսակ չոր մթերեղէն, թէյ, շաքար և այլն։

Ձեզ բոլորիդ կայցելեն նուէրներ հաւաքողները, որոնց Դուք կարող էք յանձնել ձեր կապոցները՝ առարկաներով, Ձեր կամաւոր լուման՝ զինւորներին և նրանց ընտանիքներին օգնելու մեծ գործի համար։

ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ՇԱԲԱԹԸ կը սկսվի հոկտեմբերի 19-ից, կիրակի օրվանից։ Ամեն օր նուէրների հաւաքումը կը կատարվի առանձին քաղաքամասերում, որոնց ցուցակը ի գիտութիւն ընդհանուրի կը յայտարարվի առանձին։

Խորապէս խնդրվում է—առարկաների փաթեթները վաղօրօք պատրաստած ունենալ, որպէս զի նուէրներ հաւաքողների կողմից դռան զանգը քաշելուն պէս իսկոյն հանվի և տրվի նրանց։ Ժամանակը թանգ է։

Թող այս **ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ՇԱԲԱԹԸ** լինի գթութեան շաբաթ և մղէ մեզ բոլորիս—հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր—պատերազմից վնասվածներին օգնելու ընդհանուր գործին նպաստելու։

Թող լիառատ մնայ տուող ձեռքը։

Թիֆլիսեցիները միշտ էլ արձագանք են տուել որևէ բարի գործի։

Պատերազմից վնասվածներին օգնող Քաղ. Կենտր. Կոմիտէտ
Նախագահ Կոմիտէի՝ Ալ. Խատիսեան
«Սպիտակեղէնի Շաբաթ» Կազմակերպող Կոմիտէ.
Նախագահ՝ Մ. Բերբերեան
Կոմիտէի Բիւրո—Քաղաքային Ուղղավ.

920. 1—1

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարարեան
(Մանուկ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Բոլշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(Ե.Հ.Կ.) առ. 784. 100—19

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից։
առ. (ա. օ.) 0—31 804.

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Արևելեան Պրուսիայում և Վիսլայի վրա դրութիւնը անփոփոխ է։ Աւստրիացիների ջանքերը՝ անցնելու Սան գետով՝ ի դերև ելան։ Պերէմիշլից դէպի հարաւ կռիւը շարունակվում է։ Մի քանի տեղում կռիւները փոխվեցին սուլոյին յարձակումների, որոնց ժամանակ մենք գերեցինք 15 աւստրիացի օֆիցէրի և 1000-ից աւելի զինւորի։ Կարպատի լեռնանցքներում աւստրիացիք կըրկնապատկում են իրանց ոյժերը»։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5—6 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն. «Հոկտ. 3-ին զօրաճակատում տեղի ունեցաւ միայն թնդանօթաձգութիւն երկու կողմից։ Ձախ զօրաթևում շարունակում ենք առաջանալ։ Անգլիական զօրքերը գրաւեցին Ֆրոմէլը՝ Լիլից դէպի հարաւ արևմուտք։ Իպրը ծովի հետ միացնող ջրանցքում ֆրանսիական ծովային զօրագունդը վանել է գերմանացիների յարձակումը»։

Պաշտօնական հաղորդագրութիւն. «Ձախ զօրաթևում՝ Լա-Բասսէ ջրանցքից դէպի հիւսիս դաշնակիցները գրաւեցին Ժիվանշի-Ալլիէ-Ֆրոմէլլ ռազմաճակատը և խլեցին թշնամուց Արմանտիէրը։ Արրասից դէպի հիւսիս հոկտ. 4-ին մենք յարձակման դիմեցինք մի կէտում։ Արրասի և Ուազի միջև ընկած շրջանում մենք առաջացանք մի քանի կէտում։ Դրութիւնը կենտրոնում և աջ զօրաթևում անփոփոխ է։ Բելգիական զօրքը եռանդով վանեց գերմանացիների քանի մի յարձակումները, որոնք ուղղված էին Իզերի վրա եղած գետանցքների դէմ»։

ԼՕՆԴՕՆ.—Երեկ զօրքերը գրաւեցին Էդինբուրգի մօտ գտնվող գերմանական մեծ գործարանը, ուր, ըստ լուրերի, շինված էին չափազանց ուժեղ պլատֆորմներ՝ նրանց վրա ծանր թնդանօթներ դնելու համար, որոնք կարող էին իշխել ոչ միայն իր՝ Էդինբուրգի վրա, այլ և բերդերի միջև կառուցված կամուրջի և Բոսֆոր ծովային կայարանի վրա։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 հոկտեմբերի

ԲԵԼԳՐԱԴ.—Վերջին 2 օրվայ ընթացքում աւստրօ-սերբիական մոնիտորները ի զուր տեղը ռմբակոծում էին սերբիական դիրքերը։ Նաև քաղաքի առանձին մասերը։ Բէլգրադի շրջակայքում դրութիւնը նախկինն է։

ՆԻՇ.—Սերբիական «Պրէս-Բիւրօն» հաղորդում է, որ հոկտեմբերի 3-ին թշնամին նորից յարձակում գործեց Գուչեվի վրա։ Յարձակումը վանվեց աւստրիացիների համար խոշոր կորուստներով։ Սերբերը գրաւեցին Պէիւն և Ագան՝ Միտրովիցայից դէպի հիւսիս-արևելք։ Թշնամին արտիլերիական կռիւից յետոյ փորձեց ոտքի հանել Պրկի դիրքին և Զասավիցա գիւղից դէպի արևմուտք ընկած ճանապարհին, բայց նրա յուսահատական յարձակումը ետ մղվեց։ Բաժնից բարձունքներից թշնամին սկսեց թոյլ թնդանօթաձգութիւն։ Տօպչիդերէսկոյի դէմ։ Մնացած զօրաճակատում էական օչինչ չեղաւ։

Պարզվեց, որ թշնամին սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 1-ին անագին կորուստ է ունեցել Գուչեվի և Էմինովի մօտ։ Մեր դիրքերի առաջ մի կիլոմետր տարածութեան վրա գտնվել են թշնամու 800 դիակ, որոնց տարբերակներում չը գտնվեց անգամ մի կտոր հաց, որ ճշդում է նախկին տեղեկութիւնները աւստրիացի զինւորների վատ սնդի մասին։

Սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 1-ին գործված յարձակումներից յետոյ, սերբ հետախոյզները թշնամու դիրքից լսեցին կրակ, զինւորների աղաղակ ու գանգատ։ Թշնամին գնդակահարել է և շարունակում է գնդակահարել մեծ թիւով իր զինւորներին անաջողութիւնների պատճառով։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5—6 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ.— Ծովակալութիւնը հաղորդում է, որ անգլիական մի յածանաւ, ուղեկցութեամբ հակա-ականանաւերի, կռիւ բռնվեց գերմանական հակա-ականանաւերի հետ, Հոլլանդիայի ափերի մօտ։ Թշնամու բոլոր ռազմանաւերը ջրասուզվեցին։ Անգլիացիք կորցրին վիրաւոր մի օֆիցէրի և չորս զինւորի։ Բրիտանական հակա-ականանաւերի ստացած վնասուածքները մեծ չեն։ Գերված են 31 գերմանացի ջրասուզված ռազմանաւերից։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 հոկտեմբերի

ՀՌՈՄ.—Տեղես մամուլը, ընդգծելով որ Սան-Ջուլիանոյի քաղաքականութեան ուղղութիւնը վճռականապէս թեքված էր Աւստրօ-Ունգարիայի և երբեակ դաշնակցութեան կողմը, ապացուցում է, որ միևնոյնի կեանքի բոպէները նուիրված էին նոր քաղաքական ձևակերպութիւն ստեղծելու մտքին։ Ըստ երևոյթին Սան-Ջուլիանոն կամենում էր պաշտպանել ինքն իրան աւստրիասիրութեան մեղադրանքից, որի պատճառով մամուլը և քաղաքական գործիչներն աշխատում էին պատմութեան յանձնել նրա անունը, չորակելով նրան իբրև աւստրօ-ունգարական դիւանագիտական ներկայացուցիչ իտալական մինիստրութեանը կից, ինչպէս և նրան քանիցս անուանում էին կենդանութեան ժամանակ։

ԼՕՆԴՕՆ.— Դէպտոֆորդում ընկվել են հակագերմանական անկարգութիւններ։ Կողոպտված են մի քանի խանութ։ Կանչված են զօրքեր։

ԲՕՐԴՕ.—Վերջին օրերի հակիրճ տեղեկութիւնները ընդգծում են դաշնակիցների դրութեան շահաւէտութիւնը, բայց ներկայանում են չափազանց լակոնական, որ անկարելի է ընդհանուր գիտողութիւն անել գործողութիւնների ընթացքի մասին։ Այնուամենայնիւ ֆրանսիական զինւորական շրջանները կարծում են, ունեցած հակիրճ տեղեկութիւնների հիման վրա, որ կարելի է այն եզրակացութեանը գալ, թէ մօտալուտ ձմեռը գերմանացիների կացութիւնը կը դարձնէ անտանելի։ Պատրաստելով նահանջ և ամրացնելով այդ նպատակով Նամիւր-Մէց ռազմագիծը, իսկ նրա ետևից Աախէնի մօտի ռազմագիծը, նրանք միևնոյն ժամանակ ինքնապաշտպանութիւնից կը դիմեն ընդհանուր արշաւանքի և կը փորձեն ճեղքել ֆրանսիական զօրքի ձախ զօրաթևը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պարզված է, որ ֆրանսիացիներից գերված գերման օֆիցէրները յաճախ հագել են սանիտար օֆիցէրների զգեստ, նոյն իսկ պատօրի շոր, որպէսզի ազատվեն գերութիւնից մինչև պատերազմի վերջանալը։

ՊԱՐԻԶ.—«Մատէնը» յիշեցնում է այն ծառայութիւնների մասին, որ մատուցեց պատերազմի սկզբից Ռուսաստանը. ուստ գեներալները, հնազանդվելով Թագաւոր Կայսրի անմիջական ցուցմունքներին, Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի հրամանատարութեամբ նեռվեցին առաջ, ջարդեցին իրանց հանդէպ կանգնած 200,000 գերմանացիներին և իրանց աջողութիւններով այնպիսի երկիւղ տարածեցին Արևելեան Պրուսիայում, որ նրա ազգաբնակութիւնը փախուստի դիմեց, իսկ նրա ետևից՝ Վիլհէլմ կայսրի զինւորները։ Դրա հետևանքն եղաւ այն, որ կայսրի գլխաւոր շտաբը, սարսափահար փոխեց իր ծրագիրը և արեալը կանչեց մի քանի լաւագոյն զօրաբանակների, որոնք շարժվել էին դէպի Մարնա, և 2 միլիոն զինւորի տեղ կարող էր հանդէս բերել մեր դէմ միայն մօտ 1½ միլիոն։ Յետոյ Ռուսաստանը, գոհ դաշնակիցների ցոյց տուած օգնութիւնից, վերսկսեց պատերազմական գործողութիւնները և բոլոր միացած ոյժերով մտադիր է տանել կռիւը իր սեփական հողի վրա, շարունակելով հալածել աւստրօունգար զօրքին, որին ստիպեց միանալ իր դէմ Գալիցիայում կրած արիւնահեղ պարտութիւնից յետոյ, ամօթահար Հարսբուրգի զօրքերին, և պատրաստվում է ջարդել վերջին Հոհէնցոլլէրնի զօրքերին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

— Բելգիական թագուհու Լօնդոն գնալու տեղեկութիւնը հերքվում է։ Քաջ թագուհին չէ հեռանում իր՝ աւելի քաջ ամուսին Ալբերտ թագաւորի կողքից, որի ներկայութիւնը աւելի է օգնորում բելգիացի կարիճ զօրքերին։

✧ Պետրոգրադում ստացված տեղեկութիւնների համաձայն, ներկայումս գերմանական նաւաշինարաններում պատրաստվում են 50 նոր ստորջրեայ ռազմանաւ։

✧ Շելդա գետի բերանին սկսվել է ծովային ճակատամարտ։ Բելգիական ծովափին են մօտեցել գերմանական ստորջրեայ ռազմանաւերը։

✧ Լուրերի համաձայն, գերմանական և անգլիական ռազմի նաւատորմիների միջև սկսվել է կռիւ Հելգոլանդի մօտ, որտեղից լսելի է ուժեղ թնդանօթաձգութիւն։

✧ Մակեդոնիայում, մայրաքաղաքի թերթերի տեղեկութիւնների համաձայն, տեղի են ունենում արիւնահեղ ընդհարումներ սերբ և բուլգար-թիւրք հրոսակախմբերի միջև։ Բուլգարիան շարունակում է զօրքեր կենտրոնացնել սերբիական սահմանում։

✧ Բելգիական զօրքերը միանում են ֆրանսիական զօրքին։

✧ Անգլիացի զինւորական մասնագէտների կարծիքով, գերմանացիք պատրաստվում են վճռական յարձակման։

✧ Ֆրանսիացիք գերել են բարձր Մանտէֆելին, որի կարգադրութեամբ աւերվեց Լուվէնը։

✧ Տեղեկութիւն է ստացված, որ ֆրանսիական նաւատորմը գրաւել է Օստենդէի նաւահանգիստը։

✧ Ինչպէս հաղորդում են, Բուդապէշտում իրարանցում է։ Ազգաբնակութիւնը փախչում է Տիրոլ։ Քաղաքում գտնվում են 100 հազար աւստրիացի հիւանդ և վիրաւոր զինւոր։

✧ Լվովում բացվել է ռուսական պատկան դանձարան։

✧ Օստէնդէի գրաւումը գերմանացիներից՝ անգլիացիները դանում են անխուսափելի։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

— Կ. Պոլսում լուր է տարածված սուլթանի վտանգաւոր տկարութեան մասին։ Գիշերով սուլթանի պալատ է կանչվել շեյխ-իւլ-իսլամը, որ այնտեղ մնացել է երկար։ Ենթադրեցիք պնդում են, թէ սուլթանը հիւանդացել է կերուխումից յետոյ։ Ժողովուրդը խռնվում է պալատի մօտ և պահանջում է, որպէսզի իրան յայտնեն հիւանդութիւնը։ Պալատը պաշտպանվում է զօրքերով։

✧ «Թայմսի» ասելով, Դարդանէլլի ծովափում գտնվում են 80,000 թիւրք զինւոր, իսկ Բոսֆորի ափերում 40,000։

✧ Թիւրքիան զօրահանի է ենթարկել ընդամենը 750,000 զինւոր։

ԼԵՀԵՐԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

— Պետ. Խորհրդի անդամ Շերբէկօ իր նամակում, որ տպված է «Веч. Вр.»-ի մէջ, գրում է. «Ցաւով կարդացի «Веч. Вр.»-ի յօդուածը, որ յերիւրված է «աւստրիական լեհ» անանուն թղթակցի կողմից։ Դուք արդարացի էք, որ արհամարհանքով հերքում էք ձեր թղթակցի բաց թողած միտքը մինչ որ «գրաւականներ» մասին։ Մենք հաւատում ենք կոչին, գիտենք, որ յաղթութեան մրտենով պսակված սլաւոնական մեծ պետութիւնը մեծահոգութեան և արդարութեան օրինակ ցոյց կը տայ աշխարհին և նոր «լաւագոյն կեանքի՝ կը կոչի յարութիւն առած Լեհական Ղաղարոսին։ Մենք պատրաստ ենք Ռուսաստանի յաղթութեան համար ծախսել մեր վերջին կոպէկը, թափել մեր արեան վերջին կաթիլը։ Եթէ գալիցիական լեհերի մի մասը դեռևս ծածկված է աւստրիական մշուշով, ուրեմն հեռու չէ այն ժամը, երբ նրան կը դրդի սառը իրականութիւնը։ Իսկ այն աւելորդ շիրմների պատասխանատուութիւնը, որոնց մասին խօսում էք դուք, թող ընկնի այն յանցաւոր դաւադիրների գլխին, որոնք խենթ երիտասարդութիւնը հրում են Լեհաստանի և սլաւոնականութեան թշնամիների գիրկը»։

Ա. Սոլիվանը «Нов. Вр.»-ում խօսելով Լեհաստանի տրամադրութեան մասին, գրում է. «Մենք հեռաւորագոյն անգամ չենք կարող երևակայել ուրախութեան այն մրրիկը, ոգեորութիւնը, հիացմունքը, որ բռնել է Լեհաստանին։ Լեհերը այժմ ասում են՝ «մեր զօրքերը»։ Գիւղացիները պատռում են գանձարանի տուած ատացականները՝ վերցրած ձիերի համար։ Կամաւորները մտնում են կօշակների գնդերի մէջ։ Մեր քսենձը, լեհական ապստամբութեան գաղտնի մատակիցը, 70 տարվայ մէջ առաջին անգամ աղօթում է մոսկալների (ռուսների) յաղթութեան համար։ Լեհերը մայրական քնքշանքով ջերմացնում են ռուս վիրաւորներին։ Զօրահաւաքի ժամանակ մի հարուստ կալուածատիրուհու գինետանը անօրէնի դեր են կատարել և մեծ ՀԼաս հասցրել նրան։ Կալուածատիրուհին այժմ հրաժարվում է գանձարանի վարձատրութիւնից, ասելով որ փոքը պատերազմին պէտք է։ Թէև պատերազմի ծանրութիւնը ընկած է լեհերի վրա, սակայն նրանք չեն տրտնջում և պատրաստ են իրանց արեան վերջին կաթիլը տալ, որպէսզի լեհ ժողովրդի երեք մասի բաժանված մարմինը ապրի մի ամբողջութեամբ»։

ԲԵԼԳԻԱՑԻՆԵՐԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԸ

— Մենք, բելգիացի զինւորներս, դադարել ենք մարդիկ լինելուց. մենք խելահան ենք եղել այն ամէն տանջանքներից, որոնց միջով մենք ստիպված եղանք անցնել։ Մենք սիրաբորբոք մի բան ենք կամենում, կռւել մինչև այն ժամանակ, երբ մենք ինքներս կընկնենք մեռած։ Մենք անիծում ենք վէրքերը, որոնք մեզ անգործունէութեան են մատնում։ Այդ հարկադրված անգործունէութեան ժամանակ երևում են մտքեր, կանգնում են արիւնալի պատկերներ, վերյիշվում են այն խստութիւնները, որ կատարել են ուրիշները կամ որ ստիպված կատարել ենք մենք ինքներս։ Ո՛չ, մեզ համար միայն մի փրկութիւն կայ՝ մեռնել, որովհետև ապրելը մեզ համար դարձել է անտանելի դժոխք։

Ես մի բարեկամ ունէի. նա ապրում էր մինչոյն քաղաքում, ուր ես էի։ Երբէք ես պատահմամբ հանդիպեցի նրան. նա դեռ անվնաս էր և հարցրեց ինձ—որովհետև ես նոր էի վերադարձել մեր հայրենի երկրի կռիւներից—թէ գիտե՞մ, արդեօք, թէ ուր են նրա ծնողները և քոյրերը։ Ես գիտէի, թէ ինչ վիճակվեց նրանց, բայց ասացի, որ այդ ինձ յայտնի չէ, և նա հաւատաց ինձ։ Այժմ նա սպանված է, և, գուցէ, նա արդէն գիտէր, որ ես կամենում էի խնայել նրան, որովհետև նրա բոլոր հարազատները սպանված էին...

Ո՞հ, ես ձեզ կը պատմեմ, թէ ինչպէս սպանեցին նրանց գերմանացիք և թէ ինչպէս սպանեցին նրանք ուրիշ շատ կանանց, թէ ինչպէս նրանք սպանեցին իմ հարսնացուին։ Գերմանացիք քշեցին կանանց դէպի զօրաճակատ։ Նրանց առաջ դրին մի խումբ զինւորի սուիններով, որոնք ուղղված էին նրանց դէմ. զինւորների ուրիշ խումբ դրին նրանց ետևում, և յետոյ լսվեց հրամանը և կանայք ընկան մեռած...

Այդպէս ամէն բան կատարվեց... Երբ ես իմացայ այդ մասին, ընկայ գետին և պառկած մնացի ինչպէս մեռեալ 24 ժամ շարունակ։ Երբ ես վեր կացայ, ես արդէն այլ մարդ էի, ես դարձել էի խելագար, գազան,

որ միայն մի ցանկութիւն ունի՝ կուել մինչև վերջին շունչը...

Այո, պատերազմը մեզ դարձրեց գազան, դև և խելագար...

ԿՐԱՊՈՏԿԻՆԻ ՆԱՄԱԿԸ ԳՈՒՍՏԱՒ ԷՐՎԷԻՆ

Թանգագին ընկեր, հէնց հիմա ստացայ ամսոյս 29-ին գրած նամակդ։ Սիրտս ցաւից ճմլվեց։ Ո՞ր ատիճան երաշխների աշխարհումն էք ապրում դուք, երբ զինաթափութեան և հաշտութեան պայմանների մասին էք մտածում։

Հաշտութեան պայմանները պէտք է լինեն յաղթողների թելադրութեամբ։ Եւ դուք հաշտութեան մասին էք մտածում այն ժամանակ, երբ Բէլգիան աւերածութեան է մատնվել, երբ թշնամիների զօրքը Պարիզից մի քանի հարիւր վերստ հեռաւորութեան վրա է գտնվում և մարդկային բոլոր իրաւունքները ոտնատակ տալով՝ ձեր դէմ են գալիս քաջքերի պէս կուող հոնական զօրքերը։

Աւելի լաւ է մտածեցէք, թէ ինչպէս կարելի է ջախջախել նրանց, մինչ միջոցներով փրկել Բէլգիան և ինչպէս պաշտպանել Պարիզը։

Շուտ, նոյնիսկ առանց մի օր ուշացնելու դուրս հանեցէք 20 դիւմանոց թնդանօթները, դուրս բերէք կին, երեխայ, ծեր, կանգնեցրէք Պարիզի հարաւային բարձրութիւնների վրա, հոնների թնդանօթներից արձակված ծխի մէջ։

Շուտ, ամեն օր մտածէք այդ բանի մասին, սովորէք գնդակ արձակել թշնամու օդանաւերի վրա։ Երբ նրանք խուժեցին չէզոք Բէլգիան և արիւնի ու աւերածութեան ճարակ դարձրին, այլևս միջազգային օրէնք գոյութիւն չունի։

Ըստ երևոյթին ձեզ յայտնի չէ, թէ Բէլգիայում ինչ՞ը են կատարվում։ Եւ դուք շարունակում էք անձնատուր լինել երազների։ Գրազ կը դամ, որ դուք ձեր բոլոր յոյսերը դրել էք Ռուսաստանի վրա և ձեզանից ոչ օք չը գիտէ, որ Էդվունէնի ու Բերլինի միջև տարածութիւնը 600 վերստ է։

Բաւական են երազանքները։ Ամենքդ էլ զինվեցէք։ Գերմարդկային ոյժ գործադրեցէք։ Ֆրանսիան միայն այդ գնով կարող է խլել իր ոյժն ու իրաւունքները, այդպիսով միայն կարող է օգտվել իր քաղաքակրթութիւնը, ազատութեան գաղափարները ու Եւրոպայի եղբայրական հաւասարութիւնը։ Սթափվեցէք, մի թոյլ տաք, որ այդ չարագործները նորից ճնշեն լատինական քաղաքակրթութիւնը և ֆրանսիական ժողովուրդը։

Մի՛ թոյլ տաք, որ ամբողջ դարերով մի-լիտարիզմը ծանրանայ Եւրոպայի վրա։

Խնդրում եմ, նամակս տաս ընկերներս էլ կարդան։ Լոնդոնում մենք աւելի լաւ տեղեկութիւններ ենք ստանում, քան դուք։ մենք տեսնում ենք պատերազմի ընդհանուր ընթացքը։

Քռ Պետր
(«Кав.»)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿ.

«Пет. Курьеръ»-ի ասել, «Գերմանական մարդասիրական միութեան» կոմիտէը Բոտերդամում հրատարակել է հետևեալ մանիֆէստը «քաղաքակիրթ աշխարհին»։

«Օգոստոսի 11-ին, Բերլինից մեկնելուց առաջ, մենք միութեան անունից հրատարակեցինք մի նախազգուշութիւն, որի մէջ ցոյց էինք տալիս, որ այս պատերազմի աւարառումով դեպքը մերկացվելու է, որի դիմակը արդէն ընկել է ամբողջ աշխարհի առաջ։

«Այդ նախազգուշութիւնը, որ ուղարկվեց Բրիւսէլ, Լոնդոն, Պարիզ և Նիւ-Եորկ, արդէն հաստատվեց բարբարոսական աւերումներով և ջարդերով, որ տեղի ունեցաւ վերջին 5 շաբաթվայ մէջ։

«Մենք անհունապէս սիրում ենք մեր հայրենիքը և, աքսորանքում էլ կամենում ենք ծառայել նրան։ Այդ պատճառով էլ պարտք ենք համարում խնդրել ամենքին, ովքեր ցաւում են մարդկութեան բաղդի համար, միանալ, որպէս զի կանգնեցնենք կայզերին և նրան շրջապատողներին սարսափելի յանցանքներից, որ արատաւորում են մեր ազգը աշխարհի առաջ։ Մենք գիտենք, որ Գերմանիայի բանւոր ու արդիւնաբերող դասի իսկական շահերը կը պաշտպանվեն միայն դաշնակից զօրքերի յաղթութեան պայմանով։

«Կայզէրը, աւերելով և քանդելով Բէլգիան, հիմա էլ կողոպտում է Ֆրանսիան, ողողելով նրան իր զոհերի արիւնով։

«Ամեն մի կարգին մարդու համար պարզ է, որ չէ կարող լինել ոչ տեսական հաշտութիւն, ոչ մարդկային իրաւունքների անխախտութիւն, ոչ երաշխիք ջարդերի և մահվան դէմ, մինչև որ Գերմանիայի վրա յենվող Պրուսիան չընկճվի առ միշտ։

«Միայն այն ժամանակ կարող են յարութիւն առնել Բաւարիան, Վիւրտեմբերգը, Սաքսոնիան և Հանովէրը։ Միայն այն ժամանակ Լեհաստանը կազատվի Վիլհէլմի ճիրաններից, որը իր յանցանքներով իր հպատակներին ազատել է հաւատարմութեան երդումից, ոտնատակ է տուել միջազգային բոլոր օրէնքներն ու պայմանները և գնում է սոսկագործութիւնների ճանապարհով, որ իր հաւասարը չէ ունեցել ոչ հին և ոչ էլ ժամանակակից պատմութեան մէջ»։

ԲԺԻՇԿՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Տեսնելով զօրքի հետ բոլոր վտանգները, բժիշկները—հիւանդութիւնների և մահվան դէմ այդ մարանչողները—ենթարկվում են ոչ պակաս վտանգների, քան զօրականները։

1813—1815 թ. թ. պատերազմում պրուսական զօրքի մէջ սպանվեցին 9 բժիշկ և վիրաւորվեցին 39։ Բացի դրանից, 148 զինուորական բժիշկ և 76 քաղաքացիական բժիշկ մեռան պատերազմում տիֆից։ Իսկ բոլոր բժիշկների թիւը պրուսական զօրքում 2170 էր։ Հետևաբար, բժիշկների մէջ մահացութիւնը հասնում էր մինչև 10%-ի։

1828—29 թ. թ. ռուս-թիւրքական պատերազմներում ժանտախտն զոհվեցին աւելի քան 300 բժիշկ։

1848—50 թ. թ. աւստրիական զօրքերը 1500 բժշկից կորցրին 354-ին։

Ղրիմի պատերազմում Ֆրանսիացի 450 բժշկից մահացան 82։ Սանիտարական մարմինը կորցրեց իր կազմի մէկ քառորդը։ Ռուսներից այդ պատերազմում 2839 բժիշկից մեռան 354։ Ղրիմի պատերազմի ժամանակ ռուսների մօտ ծառայութեան մտած 13 ամերիկացի բժշկից կենդանի մնացին միայն 5-ը, գերմանացի 35 բժշկից՝ 11-ը միայն։

Հիւսիս-ամերիկեան ներքին պատերազմի ժամանակ ունիօնիստներից սպանվեցին 32 բժիշկ, 8 բժիշկ մեռան վէրքերից, 9-ը դժբաղդ դէպքերից, 73-ը վիրաւորվեցին կռիւներում, 271-ը մեռան հիւանդութիւններից։

Մէկսիկա ձեռնարկված ֆրանսիական պատերազմում ֆրանսիացիներից սպանվեցին 45 օֆիցէր և 10-ը բժիշկ։ բացի դրանից մեռան 8 հիւանդանոցային պաշտօնեայ և 55 սանիտար։

1871 թ. ֆրանս-պրուսական պատերազմում 4062 գերմանացի բժիշկներից 11-ը մեռան վէրքերից, 55-ը՝ հիւանդութիւններից, 66-ը՝ վիրաւորվեցին և 538-ը՝ լուրջ հիւանդացան ծաղիկով, տիֆով և այլն։

Թիւրք-ռուսական պատերազմում մեռան 531 ռուս բժիշկ։

Ռուս-եապօնական պատերազմում բժիշկների մահացութեան տոկոսը փոքր ինչ պակասեց։ 8937 բժիշկներից սպանվեցին պատերազմում ընդամենը 374 բժիշկ։

ԾՆՆԴԵԱՆ ՆԱԻ

Զիկազոյում միաք է յղացել մի մեծ նաւ պատրաստել, որ այցելէ Եւրոպայի բոլոր կուող երկիրները և բաժանէ ամերիկեան երեխաների ծննդեան ընծաները նեղեալ պատերազմում որբացած երեխաներին։

Ամերիկեան լրագիրները լի են կոչերով, որոնց մէջ ասված է, թէ Միացեալ Պետութիւնների ամեն մի երեխայ կարող է տրտնջել որոշ գումար, հրաժարվելով ցիրկ, կինեմատոգրաֆ գնալուց կամ քաղցրեղէն գնելուց։ Այդ մնացած գումարներից կարող է կազմվել բազմամիլիոն ֆոնդ՝ ընծաներ գնելու այն երեխաների համար, որոնք 1914 թ. սև ճակատագրի կամքով դարձան որբեր։

Սպիտակ տունը խոստացել է ամենառանձնայն աջակցութիւն ցոյց տալ նաւի նախագծին։ Դիւանագիտական մարմինը, իր հերթին, առաջարկել է իր մասնակցութիւնը։

ՄԱՐՈՒԻԼԻ ԿԱՐԾԻՔԸ

«Сов. Сл.» խօսելով Պարսկաստանի պահանջի մասին, ռուս զօրքերը Ատրպատականից հեռացնելու առիթով արված, նախազգուշացնում է Պարսկաստանին.

«Սակայն այն հանգամանքը, որ Պարսկաստանը պատրաստ է զէնք դառնալ այդ նպատակին հասնելու համար, չափազանց ողբալի կը լինի հէնց իրան Պարսկաստանի համար։ Որովհետև այդ բանը ուրիշ ինչի կարող է ծառայել Պարսկաստանին, բացի Պարսկաստանի ստորացումից։

«Անգլո-ռուսական Պարսկաստանի վերաբերեալ համաձայնութիւնը հանդիսանում է քաղաքական մի փաստ, որին տարբեր կերպով կարելի է նայել։ Բայց անկասկած է, որ նրա համար պատմական հիմք է եղել, որոնք հիմա չեն կարող քննվել։ Նոյնպէս չէ կարող քննվել և ռուսական զօրքերը դուրս բերելու հարցը։ Այդ հարցը բարձրացնելով, Պարսկաստանը ընդառաջ է գնում արկածախնդրութեան, որը նրան ոչինչ չի խոստանում։

«Պատերազմական անցքերի գերմանական լուսաբանութիւնը, ինչպէս երևում է, աղդել ոչ միայն Կ. Պոլսի քաղաքագէտներին, այլ և Թէհրանի մինիստրներին։ Եթէ վերջիններս կուրութեան ճանապարհ բռնեն, այն ժամանակ Պարսկաստանի համար սև օրեր կը գան, ի զուր տեղը։ Թիւրքական էմիսարները կամենում են մուսուլմանական շարժման ալիք բարձրացնել, որ Գերմանիան օգտագործի իր շահի համար։ Եւ նրանց ագիտացիան, ամենից առաջ, ուղղված է պարսկական մուսուլմաններին։ Բայց այդ փորձը, ըստ էութեան, դատապարտված է անաջողութեան։ Եւ օրքան շուտ հասկանայ այդ պարսից կառավարութիւնը, այնքան լաւ կը լինի Պարսկաստանի համար, որովհետև Թիւրքիան միաք ունի գրաւել պարսկական մի քանի շրջան։ Քիւրդերի արշաւանքը այդ մտադրութիւնները իրականացնելու միջոցներից մէկն է»։

*

«Рус. Вѣд.»-ին նոյն առիթով գրում է.

«Մաքրել Պարսկաստանի հիւսիսը ռուսական զօրքերից, այժմ այդ չէր նշանակի պարսիկ ժողովրդին սեփական գործերի անօրէն դարձնել։ Դա պարսիկներն իրանք չեն մտածել, որ մեր զօրքերը հեռացնենք իրանց դաւառներից։ Այդ նրանց օգուտ չէր բերի։ Կասկած չը կայ, որ բանը այսպէս Թիւրքիայի յարմարութիւնների համար է արվում, մինչև որ նա խելքի գայ վերջապէս մեզ պատերազմ յայտարարելու։ Ինչպէս մենք ասել ենք, Պարսկաստանը զինուորական տեսակէտից ոչինչ մեծութիւն կարելի է համարել։ Բայց Թիւրքական զօրքի անարգել մուտքը Ատրպատական անշպատ կերպով կանդրադառնայ Կովկասը Թիւրքերից պաշտպանելու պայմանների վրա։ Իսկ պարսիկների վրա պարտաւորութիւն դնել իրանց ոյժերով պաշտպանել իրանց չեզոքութիւնը, պահանջել՝ որ նրանք էլ այնպէս պաշտպանեն սահմանը, ինչպէս այդ, օրինակ, անում են շվեցացիք... ձմ է հարկաւոր նման կոմէդիան»։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ԻԴԷՕԼՕԳԻԱՆ

VII

Թիւրքիան եւրոպական պետութիւնների առանձին ուշադրութեանն արժանացաւ այն օրից, երբ նա պատերազմական բունտի միջոցով՝ դարձաւ սահմանադրական կառավարութիւն։ Բայց Թիւրքիան անցեալ դարի եօթանասնական թուականներին արդէն ունէր սահմանադրութիւն, և ես, ի միջի այլոց, ահա ինչ էի գրում այն ժամանակ։

«Թիւրքիան չը դանդաղեց իր հպատակներին կոնստիտուցիա շնորհել, իսկ շէյխ-իսլամը, մարգարէի օրէնքների դերագոյն սեկնիչը, չը դժուարացաւ յայտնել իր քաջալերութիւնը խորիմաստ Միտհադ փաշայի այդ ազատամիտ յօրինուածքին։

«Այդ սահմանադրութիւնը Թիւրքիայի քրիստոնեայ հպատակների դրութիւնը ոչ միայն մի նշանախէց անգամ չի փոխի, այլ և կարող է նոյնիսկ նոր զէնք դառնալ նոր շահատակութիւններ կատարելու, նոր, աւելի պիտանի զէնք այն տեսակէտից, որ նա իր արտաքին տեսքով եւրոպական հասարակութեան մեծամասնութեան մակերեսային հասկացողութեան համար կերևայ չափազանց քաղաքավարի ձևի մէջ։

«Թիւրքիայի քրիստոնեայ հպատակները պատկանում են զանազան ազգութիւնների և նրանց շահերը շատ հարցերում կարող են բոլորովին տարբերվել։ իսկ ժողովի թիւրք ներկայացուցիչները միացած են թէ ընդհանուր շահերով, թէ Ղուրանի հիմունքներից բղխած պետական հայեացքների միօրինակութեամբ։ Բացի դրանից՝ պարլամենտում քրիստոնէական փոքրամասնութիւնը միշտ պէտք է բաղկացած լինի առաւելապէս այնպիսի անձերից, որոնց շահերը համերաշխ են աւելի թիւրք կարգերի, քան իրանց հայրենակիցների ազգային պահանջների հետ։ Ամեն ազգ ունի իր բենեգատ և կեանքին միայն նիւթական օգտի տեսակէտից նայող մարդիկ։ Այդ դիսիները ոչ միայն յարմարվում են պետական ամեն կարգի հետ, այլ և այդ կարգերը շահագործում են իրանց օգտին։ Ակնյայտնի է, որ Թիւրքիայի քրիստոնեայ հպատակների մէջ կան մարդիկ, որոնք հարստահարելով իրանց ազգակիցներին՝ եկամուտի աղբիւր են ճարում իրանց համար, և այդպիսիները վախենում են, որ տիրող պետական կարգերի վերացումով կը ցամաքին և իրանց եկամուտի աղբիւրները։ Այն տեսութիւնը, որ նման մարդիկ ստեղծում են իրանց համար ազգակիցների կողմից, աւելի ամրացնում է այն կապը, որով կապված էին նրանք իրանց Թիւրք հարստահարիչների հետ. և այս ամենն ահա երաշխիք է ծառայում այն բանին, որ կայսրութեան քրիստոնէական հայերի այս մոլորվածները մասնակցելու Թիւրք ներկայացուցչական ժողովում։

«Եթէ այս սահմանադրութիւնը վիճակված լինէր դառնալ մի լուրջ հաստատութիւն, նա միայն կամրացնէր Ղուրանի վրա հաստատված պետական կարգերը և կը ծառայէր որպէս հարստահարութեան զէնք քրիստոնեաների դէմ»։

«Մահմեդականութիւնը, իր իսկական էութեամբ չէ կարող քաղաքացիական և քաղաքական զարգացման աղբիւր ծառայել։ անտարբերութիւնը և անշարժութիւնը կազմում են մուսուլմանական կուլտուրայի բնորոշ յատկութիւնները։ Հարեմի տիրապետութիւն, կնոջ ճորտական դրութիւն, դէպի քրիստոնեաներն եղած յարաբերութիւնը ինչպէս «անհաւատ շների» հետ—ահա այսպիսի են իսլամի քաղաքացիական և քաղաքական սկզբունքները։ Զգուանք դէպի ամեն աշխատանք, ատելութիւն դէպի մատաղ գործունէութիւն, կոյր հնազանդութիւն դէպի անխախտ ճակատագիրը՝ կազմում են Մահմէդի վարդապետութեան հեւաւորների անհատական ընոյթը։

«Քրիստոնէական ուսմունքն այնքան հակառակ է իսլամի վերև յիշածս սկզբունքներին, որ Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութեան և Թիւրք կառավարութեան միջև չէ կարող գոյութիւն ունենալ օրէնքի օրգանական կապ և ոչ մի սահմանադրութիւն չէ կարող այդ կապն ստեղծել։ Զորս դար է Թիւրքերը իշխում են Բալկանեան թերակղզում և նրանց ու վերջինիս ժողովուրդների միջև ոչ մի մերձեցում տեղի չունեցաւ։ Ցենվելով զինված ոյժին, նրանք միայն պահպանում են տիրողի իրաւունքը Թիւրքիայի քրիստոնէական ազգաբնակութեան այն մասի վրա, որը դեռ չէ կարողացել ազատվել նրանց լծից...

«Այն ուրուականային բեֆորմները, որ ձեռնարկել է Թիւրքիան, չեն կարող նրա պետական կառուցուածքի մէջ պատշաճ փոփոխութիւն առաջացնել։

«Ժամանակից եւրոպական պետութիւնը չէ կարող գոյութիւն ունենալ, երբ իր կազմութեան հիմք չէ ընդունում իր բոլոր հպատակների իրաւահաւասարութեան սկզբունքը։ Իսկ այդ սկզբունքն ընդունել նա չէ կարող առանց իսլամութիւնից լիովին հրաժարվելու. դրա համար նա պէտք է դադարէր մահմեդական պետութիւն լինելուց։ Բայց Թիւրքիայում իշխող մահմեդականութիւնը բոլորովին չէ մտածում մի այդպիսի ինքնահրաժարման ակտ կատարել։ Ընդունելով կառավարութեան ներկայացուցչական արտաքին ձևը, նա չէ փոխել իսլամի հիմնական պետական հայեացքները. քրիստոնեաները մնում են իրաւազուրկ ինչպէս առաջ, և քրիստոնեայ մարդու կեանքը շարունակում է մահմեդական ազգաբնակութեան աչքում մնալ նոյնը, այսինքն՝ ոչ մի արժէք չունեցող։ Քրիստոնեային սպանելը մահմեդականի համար Ալլահին հաճոյ մի գործ է, և դրա համար էլ մուսուլմանի գիտակցութեան մէջ չէ համարվում ոճրագործ արարքունք։

«Եւ իրաւ, Թիւրքիայի մահմեդականները երկրի մէջ սահմանադրութիւն մտցնելուց յետոյ, ինչպէս առաջ, սոսկալի չափերով կոտորածներ են սարքում,—սպանութիւններ Բուլգարիայում, յոյներին կոտորելը Կիլիկիայում և բոլոր ուսս գերի և վիրաւոր զինուորներին սրի քաշելը—սարսափներ, որ քաղաքակիրթ մարդութիւնը կարող են սառեցնել երակների մէջ, մահմեդականների կողմից կատարվում են բոլորովին հանգիստ, երբորդը անցեալ տարվայ տարած քարը բերում ու ետ տալիս վանքին և այն և այն։

Մուրթ գիշերը վրա է հասնում, հաղարաւոր բազմութեան հետ ես ևս աշխատում եմ յոգնած ու դադրած մարմնիս որևէ կերպ հանգիստ տալ, որը ինձ չի թողվում, և զուռնաների զիլ կանչը, պարողների ծիծաղն ու ոտքերի մինչ լուսաբաց, մատաղների մորթվելը՝ մարդու գլխից չեն հեռանում։

Եւ նիրհի ու յոգնածութեան, թմրութեան մէջ օրքան մտածումներ, օրքան խորհրդածութիւններ են զարթնում քո մտքում։

Իմ ամբողջ ճանապարհին հանդիպած գիւղացիները իրանց պատկերներով ու պատասխաններով կենդանանում են իմ առաջ և ամեն մէկը կարծես թէ իր խեղճ ու կրակ դրութիւնն է լալիս, կանչի և բաղդի հետից քարշ ընկած, խաղալիք դարձած։

Մինչև իսկ պարող, թռչկոտող ուխտաւորներն անգամ կարծես թէ ուրախանալու, բաւականութիւն ստանալու ցաւով բռնված՝ ամեն միջոցի դիմում են կեանքից կուշտ և բուռն կերպով բաւականութիւն ձեռք բերելու։

Լուսանում և արևը բարձրանում է. ուխտաւորները պատրաստվում և մէկ-մէկի հետից շարան-շարան հեռանում են վանքից։

Կէս օր է. ահագին բազմութիւնը չը կայ. մի քանի զոյգ ու կէնտ մարդիկ են միայն երևում։ Մարդուս այնպէս է թուում, որ եղբայրներ էին այն բոլորը, որոնք նրա շուրջը կատարվում էին, ունայն այն ամեն ուրախութիւնը, պարը, աղօթքը և բոլորը, բոլորը... Սա կեանք է, իսկական կեանք։ Կեանքն էլ իր աղմուկը, իր ժխորը և ամայութիւնն ունի։

Ս—եան

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԴԷՊԻ ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

(Ս պ ա ռ ա ծ ա ր ա ն ք ն ե ր)

Գօրխից Ծիծեռնավանք տանող ճանապարհը, որով ես գնում էի, անցնում է Խնձորեսկ, Քարաշէն, Տեղ և Խնածախ գիւղերի հողերի միջով։ Սեպտ. 14-ը մի գեղեցիկ և հիանալի օր էր։ Գօրխից դուրս եկայ մենամենակ։ Քաղաքից մի վերստաչափ հեռանալով պատահեցի մի քանի քարհանների, որոնք ծանր մուրճերի և երկաթէ սեպերի օգնութեամբ կոտրտում էին մեծ-մեծ քարեր։ Մօտենալով նրանց՝ «բարի օր» ասացի և պատասխան ստացայ։

— Է՛հ, այդքան քրտնում-տանջվում էք,— շարունակեցի ես,—մի հարցնող լինի թէ այս բոլոր էիս ինչ կը ցանկանայիք, տեսնես ինչ կասիք դուք։

— Ի՞նչ կուզէի։ էս անտէր քարերը կոտրատված կուզէի տեսնել,—ասաց մի հասակաւոր քարհատ։

— Չէ, ախպէր, էդքանով ես ոազի չեմ։ էս քարերը ոսկի դառած կուզէի,—վրա բերաւ մի երիտասարդ։

— Երկուսդ էլ դատարկ բան էք ուզում։ ես էլ կուզէի հէնց էս քարը ոսկի լինէր,—ասով հրեց երրորդը մի կոլոր քար ու ցած՝ անդունդը գլորեց։

— Երեքով էլ շատ համեստ և քիչ բան էք ցանկանում։ Աստուած տայ,—ասացի ու առաջ անցայ ես, առանց նրանց նայելու։

Փոքր ինչ գնալուց յետոյ՝ հանդիպեցի խնձորեսկցու պատկանող մի հօտի։ Արևակէզ դէմքով մի առողջ հովիւ ջարի վրա նստած, ինքնագոհ կերպով շվշվացնում և հօտն էր հսկում։

— Բարի օր, Աստուած բարաքեաթ տայ,—ասացի ես.—ինչ ես օրդ անցկացնում։

— Բարով եկիր. փառք ի Տէրին, լաւ եմ, սաղ ինես, վարժապետ, շտեղ ես քիւնում,—հարցրեց ինձ ճանաչող հովիւը։

— Ծիծեռնավանք եմ գնում,—պատասխանեցի և ձիուցս իջայ աղբիւրից ջուր խմելու։

Հովիւը մօտեցաւ, ձեռքս թոթվեց ու նստեց աղբիւրի մօտ։

— Շատերը քեզ երանի են տամ. էլ ասում չեն, թէ տարումը ցուրտ, անձրև, կարկուտ կայ,—ասացի ես.—եարաբ մէկը հարցներ, թէ էս բոպէիս ինչ կուզէիր, տեսնես ի՞նչ կը պատասխանէիր։

— Ինչ կը պատասխանէի. կասէի՝ էս ոչխարներից մի 20-ը խմս լինէր, էլ դարդս չէր լինի,—ասաց հովիւը և մի ախ քաշեց։

— Երանի քեզ, որ 20 հատով բաւականանում ես. ես կուզէի 1000 ոչխարս լինէր և մի մեծ քաղաքի մօտ ծախելիս հաստ 10 ը.,—ասացի ես քմծիծաղ տալով։

— Վարժապետ, որ դու 1000-ն ես ուզում, ինձ էլ հազիւ ինձու գեօրա 20-ը ընկնի, էլի՛.—հովիւը ծիծաղից ու դէպի հեռացող ոչխարները գնաց։

Ես առաջ անցայ և մտայ Քարաշէն գիւղի հողերը. երկու տաւարածներ եղներ էին արածացնում բլուրի վրա։

Բարի օրն ու Աստուածու բարին ըստ սովորականին փոխանակելուց յետոյ հարցրի.

— Մի հարցնող լինի թէ, այ խեղճ եղնարածներ, տարին 12 ամիս էս եղների պոչը բռնած քանի՞ մէկ աշխատէք, չարչարվէք ու վերջն էլ ասված նստէք. բա դուք խեղճ չէք, ձեզ Աստուած չի ստեղծե՞լ. քիչ չարչարվեցէք։ Աստուած, որ հարցնի, թէ ինչ էք ուզում, որ ձեզ տամ, եարաբ ինչ կուզէք,—վերջացրի և սպասեցի պատասխանի։

— Ա՛խ, ախ,—շրթունքները կրծոտելով մէջքից կորցած մի ծերունի բարկացած բացականչեց.—մին Աստուած հարցնում ա, որ ես մի էնպէս պատասխան տամ, որ լնա մնայ մաթալ, զարմացած, թէ ի՛նչ եմ ուզում. եանի կը հարցնի։

— Կը հարցնի, է՛, կը հարցնի, դու ի՞նչ կուզես, է՛ մի էն ասի ինձ։

— Ի՞նչ կուզեմ, առաջ կասէի՝ ինձ ստեղծել ես էս եղների համար, շատ լաւ, շնորհակալ եմ. դէ իմ չարչարվելնու գեօրա էլ հաց տուր, որ սովից չը մեռնեմ. եթէ դու արդար Աստուած ես, խէ մինի ուսերովը բաղդը թափում ես, մինն էլ տարին 12 ամիս վազ ա տամ, չարչարվում ա, կարում չի եանիցը հասնի։ Բու արդարութիւնդ էդ ա, հը՞. հէնց Աստուած չէ, դու ես, դու,—դարձաւ նա ինձ,—ջուղաբլես տուր։

— Լաւ ես ասում, ինչ ասեմ.—պատասխանեցի ու առաջ անցայ։

Տեղ գիւղը իր կոպիտ ու կոշտ արտայայտութիւնով մեզանում շատ յայտնի է։ Պատահեցի երկու հօտաղների. մէկը չափից դուրս նիհար ու չոր դէմքով երիտասարդ էր, իսկ միւսը ծեր, մօտ 60 տարեկան, դաժան դէմքով մի գիւղացի։ Բարևը ըստ հերթին անցաւ.

— Ա՛յ մի Աստուած էս սնաթիս ասէր, թէ սիրտներդ հէնչ ա օղում. տեսնաս, հէնչ պատասխան կը տայիք.—հարցրի ես։

— Բա, դու իր պակաս գլխուս, բարով եկիր. ես Աստուած Աստուած կանչելան բեզարել եմ, հալա սա նոր ա եկել թէ Աստծու անունը տուր։ Աստծու տաւածը ինձ հարկաւոր չէ այսուհետ. հէս ա ասնիս մէկը գերեզմանում. ով որ շատ ա ապրելու, հէնց մէկը դու, կարող ես Աստծու անունը շուտ շուտ տաս.—պատասխանեց ինձ և լռեց ծերունին։

Ես ևս լռեցի ու անցայ։

Խնածախի սարում մի խումբ տաւարածներ նստած՝ արևը մայր մտնելուն էին սպասում, որ եղներն ու կովերը գիւղը քշեն. շուրջ նստած անեկդոտներ էին պատմում և բրդէ մեզարում*) չոր հաց թափթփած, այս ու այն կողմից ձեռք էին մեկնում և ուտում։

— Բարի օր ձեզ. ինչ բանի էք։

— Գէջ ենք անում,—պատասխանեց մէկը։

— Եթէ մինը հարցնի, թէ ի՞նչ էք ուզում, որ ես ձեզ տամ, ինչ կասէք եարաբ,—հարցրի ես նրանց։

— Մեզ ոչինչ էլ հարկաւոր չէ, բան չենք ուզիլ,—ասաց միջահասակ մէկը։

— Դու քեզ համար ես ասում, իսկ միւսնե՞րը։

— Մենք գիտենք, որ Աստուած մի չոփ էլ չի տայ, որ աչքներումս դնենք, դրա համար էլ բան չենք ուզիլ։

— Մի երկու լղար եղն ունենք, էն էլ ձեռքներիցս կառնի,—պատասխանեց մի սեղդէմ գիւղացի։

Ես բարևոք համարեցի լռել և անցնել։

Հասայ վերջապէս Ծիծեռնավանքը, որը այդ օրը 20 գիւղերից ուխտաւորներ էր իրան գրաւել, մինչև անգամ Թիւրքեր. նրանք ես մամ էլ՝ վառում և աղօթք անում։

Բոլորն էլ հաւատով, աղօթքով, խնդրուածով են ծանրաբեռնված այստեղ. չը կար մէկը, որ մամ վառելիս մի աղօթք չանէր։ Մէկը տաղ է խնդրում, միւսը՝ գոնէ մի

*) Տեղական գործածութ։

աղջիկ, երրորդը անցեալ տարվայ տարած քարը բերում ու ետ տալիս վանքին և այն և այն։

Մուրթ գիշերը վրա է հասնում, հաղարաւոր բազմութեան հետ ես ևս աշխատում եմ յոգնած ու դադրած մարմնիս որևէ կերպ հանգիստ տալ, որը ինձ չի թողվում, և զուռնաների զիլ կանչը, պարողների ծիծաղն ու ոտքերի մինչ լուսաբաց, մատաղների մորթվելը՝ մարդու գլխից չեն հեռանում։

Եւ նիրհի ու յոգնածութեան, թմրութեան մէջ օրքան մտածումներ, օրքան խորհրդածութիւններ են զարթնում քո մտքում։

Իմ ամբողջ ճանապարհին հանդիպած գիւղացիները իրանց պատկերներով ու պատասխաններով կենդանանում են իմ առաջ և ամեն մէկը կարծես թէ իր խեղճ ու կրակ դրութիւնն է լալիս, կանչի և բաղդի հետից քարշ ընկած, խաղալիք դարձած։

Մինչև իսկ պարող, թռչկոտող ուխտաւորներն անգամ կարծես թէ ուրախանալու, բաւականութիւն ստանալու ցաւով բռնված՝ ամեն միջոցի դիմում են կեանքից կուշտ և բուռն կերպով բաւականութիւն ձեռք բերելու։

Լուսանում և արևը բարձրանում է. ուխտաւորները պատրաստվում և մէկ-մէկի հետից շարան-շարան հեռանում են վանքից։

Կէս օր է. ահագին բազմութիւնը չը կայ. մի քանի զոյգ ու կէնտ մարդիկ են միայն երևում։ Մարդուս այնպէս է թուում, որ եղբայրներ էին այն բոլորը, որոնք նրա շուրջը կատարվում էին, ունայն այն ամեն ուրախութիւնը, պարը, աղօթքը և բոլորը, բոլորը... Սա կեանք է, իսկական կեանք։ Կեանքն էլ իր աղմուկը, իր ժխորը և ամայութիւնն ունի։

Ս—եան

գիտակցութեամբ»։

Ահա այս բոլորը 1877 թուին ինձ այն եզրակացութեանն էին բերել, որ «Թիւրքիան այլևս Եւրոպայում գործ չունի»։

Իմ՝ Մխիթարեան սահմանադրութեան վերաբերեալ արած դիտողութիւնները կատարելապէս կարելի է վերագրել երիտասարդ-Թիւրքերի նոր սահմանադրութեան, գոնէ այն չափով, ինչ չափով իմ նկատողութիւնները վերաբերում են քրիստոնէական տիպի սահմանադրութիւնը մահմեդական ժողովուրդների Ղուրանի վրա հաստատված ամուր աշխարհահայեացքներով հիւսված իրաւունքի մէջ չը տեղաւորելուն, մի իրաւունք, որը ձևակերպում է նրանց պետական կազմակերպութիւնը և որը Թիւրքերի համար ունի աստուածային սանկցիա և ուրեմն չէ կարող ենթարկվել ոչ մի փոփոխութեան։

Քրիստոսի «Ցուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ» պատգամը, որ պետութեան և քրիստոնէական եկեղեցու միջև ուժեղ սահման է գծում, առանցքն է քրիստոնէական քաղաքակրթութեան ազգերի պրոգրէսիվ աճեցման, նրանց պետական համայնակեցութեան կարգերի անդադրում կատարելագործութեան, և որը արգելքի չէ հանդիպում աստուածային օրէնքի հաստատուն նորմաների մէջ։

Քրիստոնէական աշխարհում՝ բիւզանդականութիւնը, Քրիստոսի այս պատգամի հակառակ, Աստուծունը կայսրենի հետ շփոթելով կործանեց Բոսֆորի ափերում հռոմէական կայսրութեան ծոցից դուրս եկած յունական քրիստոնեայ կայսրութիւնը։

Իսլամը նախապէս և միանգամ ընդմիշտ նախորոշեց այդ վարդապետութիւնն ընդունող ազգերի ամբողջ քաղաքական և քաղաքացիական կազմաւորումը։ Դրա համար Մահմէդի ուսմունքին հետևողները պէտք է հրաժարվեն այդ ուսմունքից, որպէսզի կարողանան կանգնել այն առաջադիմական քաղաքացիական և քաղաքական վարքագծման ուղու վրա, որով ընթանում են քրիստոնէական կուլտուրայի ժողովուրդները։ Իսլամի վարդապետութեան հետ չէ համաձայնում սահմանադրութիւնը, որը սահմանափակում է խալիֆի լիազօրութիւնները և թոյլատրում է մահմեդականների և այլ կրօնի մարդկանց իրաւահաւասարութիւնը։

Սակայն Թիւրքիայի անցեալ դարի վերջերի և նոր սահմանադրութիւնների միջև կայ նշանաւոր տարբերութիւն, և վերջինս իսլամի հետևորդների աշխարհահայեացքին անհամեմատ աւելի հակասական է, քան առաջինը։

Մահմեդական սահմանադրութիւնը մի միջոց էր Թիւրք պետութեան քրիստոնեայ հպատակներին կառավարելու բարբարոսական կարգերը քօղարկելու լուսաւորված եւրոպացիների տեսողութիւնից։ Այն ժամանակ ոչ մի հիմնական փոփոխութիւն չէր մտած Մահմէդից հաստատված իրաւակարգի մէջ և Թիւրքիայում ապրող քրիստոնեաների վերաբերմամբ, որոնք նկատված են որպէս թշնամի և ճորտ, ոչինչ չէր նախատեսված։ Ղուրանի և շարիաթի անձեռնմխելիութիւնը լիովին ապահովված էր պարլամենտի կազմով, որի մէջ քրիստոնեաներին թոյլ տուին մտնելու շատ չնչին թւով և այն էլ այնպիսի մարդկանց, որոնք համերաշխ էին աւելի Թիւրքական կարգերին, քան իրանց ցեղակիցների և ազգակիցների պահանջներին։

Եւ ապա, երբ ազատամիտ Եւրոպայի վրա ցանկալի տպաւորութիւնը թողին, չքացաւ և այդ սահմանադրութեան ուրուականը։

Բոլորովին այլ նշանակութիւն ունի երիտասարդ-Թիւրքերի ներկայ կօնստիտուցիան։ Այդ սահմանադրութիւնը գործ է մի բուռն զինուորական խռովարարների, որոնք հրապուրվելով քրիստոնէական Եւրոպայի պետական և հասարակական կարգերից՝ դաւաճանեցին իսլամին։

Հիմա երիտասարդ-Թիւրքերի ոյժը կայանում է հայրենասիրական խառնուածքի ուժեղ թափի, նրանց կազմակերպչական մարմինների սերտ կապակցութեան և նրանց իսկ առաջնութեամբ Եւրոպական Թիւրքիայի զինուորականութեան Մակեդոնիայի քրիստոնեայ ազգաբնակութեան հետ կապող դեռ ևս իրանց համակիր տրամադրութեան ու մօտիկ յարաբերութեան մէջ։ Այդ զինուորական-հրամանատարական կազմութեան ժողովրդականութիւնն հետզհետէ անցնում է ատրին զինուորութեան, և այդ ժողովրդականութեանը չէ խանգարում զինուորական պետերի մահմեդականութեան իսկական դաւանանքից հեռացած լինելը, որովհետև ինքը ատորին զինուորութիւնը իրան հաշիւ չէ տալիս իրանց օֆիցէրների հակաիսլամական մտաւորների մասին. իսկ շեյխ-իլ-իսլամի համաձայնութեամբ Աբդիւլ-Համիդի լայնածաւալ պետութեան զուրկ մի ուրիշ ուղղահաւատ սուլթան դնելը չէ հակասում մուսուլմանական օրէնքներին։

Օսմանեան կայսրութիւնը վերակազմող երիտասարդ-Թիւրքերի թիւը չնչին է։ Նա կազմում է Եւրոպական Թիւրքիայի բնիկ ժողովրդի մի աննշան մասը, մօտ 3 միլիոն մարդ։

Եւ ահա այդ մի բուռը ժողովուրդն է համայն աշխարհի քրիստոնեայ պետութիւնների առաջ իրան ներկայացնում Թիւրք կայսրութեան 30 միլիոնանոց ազգաբնակութեան կամքը։

Իրանց և իրանց սահմանադրութեան դէմ երիտասարդ-Թիւրքերն ունեն բացի Եւրոպայում ապրող հայրենակիցների մի ստուար մասից, այլ և ասիական, այսինքն իսկական Թիւրքիայի ամբողջ ազգաբնակութիւնը, Թիւրքիայի, որ ի ընէ ասիական և զուտ մահմեդական պետութիւն է։ Այդ պետութիւնն ունի մօտ 20 միլիոն մահմեդական ազգաբնակութիւն իր ցեղային կազմով հարեան ճիշդ երեք մասի բաժանվող. Թիւրքեր, արաբներ և ուրիշ ժողովուրդներ, որոնց մէջ խոշոր թիւ են կազմում դրուզները և մարոնիտները։

Երիտասարդ-Թիւրքերի յեղափոխական կազմակերպութեան թուլութիւնն աւելի խախուտ է դառնում այն բանից, որ արաբները Թիւրքաց սուլթաններին համարում են իրանց հայրենակից Մահմէդի յաջորդներից խալիֆատը գողացող ինքնակալներ։

Այսպիսի հանգամանքներում Թիւրք սահմանադրական միապետութեան անհաստատ շէնքը ճաքվում է այս ու այն կողմ Եւրոպայում և Ասիայում եղած յաճախակի դաւադրութիւններից և ապստամբութիւններից։

Զ.

ԲԱՂԹՎԱԾՆԵՐԸ ՉԵԶ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ...

—

Բէլգիացիք։

Ողջունում են ձեզ, մանր ազգեր, նրանք, այդ փոքր ազգի մեծ զաւակները, իրանց սիրուն հայրենիքի, իրանց պատուի և ապատութեան համար մինչև վերջին շունչը կուռող ազնիւ հոգիները, բէլգիացիք։

Նրանք գիտեն կուռել, երբ կռիւ է հարկաւոր. նրանք գիտեն քաջի պէս մեռնել, երբ հայրենիքի պատիւը, անկախութեան ու ազատութեան սրբազան գաղափարն է այդ պահանջում. հերոսներ են նրանք թագաւորից սկսած մինչև յետին զինուորը, ողջունում են ձեզ այդ հերոսները.

Բաղթվածնե՜ր...

Բաղթվածները ֆիզիքապէս, յաղթողները բարոյապէս, բէլգիացիք. կորցրին այն, ինչ կարելի է նորից ետ ստանալ, փլատակներն ու աւերակները նորից կարելի է վերաշինել, իսկ այն անձեռագործ մեծ կոթողը, որ կանգնեցրին նրանք իրանց պատուի ու բարոյական յաղթանակի դաշտում, այլևս ոչ մի թնդանօթ չի կարող կործանել, նա յաւիտենական է. նրանք, բէլգիացիք, որպէս անձնուէր հայրենասէրներ ու պատուի պաշտպանութեան անվեհեր մարտիկներ այնպիսի սիրելի անուն վաստակեցին ապագայի պատմութեան մէջ, որ միաբերան պատիւ ու յարգանք պիտի լեն նրանք դարէ-դար, ինչպէս այսօր միաբերան յարգանք ու ցաւակցութիւն են լսում նրանք երկրագնդի բոլոր ծայրերից։

Պատի՞ւ ու յարգանք։

Ապագան։

Ֆիզիքական յաղթանակը տեղի է տալիս բարոյական մեծ յաղթանակին. ապագան խաղաղասէր մաքինն ու հանճարինն է, ոչ մարդախոշոր զէնք ու զրահինը։ Մարսի իշխանութիւնը իր վերջին ճիգերն է թափում «հզօրագոյնս» կուելով։ Մեր մոլորակը շատ է տեսել աշխարհակալական ձգտումներով յղփացած, աշխարհաւեր նուաճումներով ամբարտաւանացած միապետներ ու զօրապետներ։ սակայն այսօր նրանք անցել են ու գնացել, պատմութեան մէջ սև էջեր թողնելով. ու նրանց բարոյապուրկ տիրապետութիւնից այսօր մի հետք էլ չէ մնացել։ Կենսունակ մնացել են բարոյական ոյժ ունեցող և մարդասէր ազգերն ու ժողովուրդները։ Փոթորիկներն ու վերահաս մրրիկները զոռող ու հաստարմատ կաղնիներ են տապալում գետին, բայց ճկուն և իր մէջ բարոյական կեանքի նեխէ պարունակող եղէգնիները փոքանքի ժամին առ ժամ կուչ գալով նորից գլուխ են բարձրացնում, երբ ծագում է արևը։

Արև մարքի, արև բարձր քաղաքակրթութեան և բարոյական վերածնութեան։ Հեռու չէ այդ արևի ծագումը։

Եւ այն ժամանակ «մեռածը չի ողջանայ, բայց գլորվածը վեր կը կենայ»։

Բէլգիացիք. այսօր յաղթված բէլգիացիների ժառանգները կազդուրված ու ամոքված պարծանքով պիտի նայեն ապագայ սերունդների երեսին. իսկ այսօրվայ յաղթողների թոռները պիտի ամաչեն իրանց պապերի վանդալական արշաւանքի և նրանց կեղծ քաղաքակրթութեան ու կործանարար քաղաքականութեան համար։ Եւ ինչպէս այսօր, երբ գերմանացիներին «տևտոնները» կամ «հոները» են կոչում, ու Վիլհէլմին՝ Աթիլա, գերմանացիք վիրաւորվում են, այնպէս էլ ապագայ գերմանացիք պիտի վիրաւորված զգան, երբ քաղաքակիրթ աշխարհը նրանց համարէ այժմեան «գերմանացոց» թոռներ ու յաջորդներ։

«Ժամանակները փոխվում են, և մենք փոխվում ենք նրանց հետ»։

Քաղաքակիրթ ազգեր և մանաւանդ մանր ազգեր ու ժողովուրդներ, ձեզ օրինակ Բէլգիան ու դիւցազն բէլգիացիք։

Բաղթվածները ձեզ ողջունում են։

Փոքր յաղթվածներին։

Լ. Ոնեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

5—6 հոկտեմբերի

ՀՌՕՄ. — Այսօր քաղաքական աշխարհի ներկայացուցիչներին և հասարակութեանը թոյլ տուին Սան-Զուլիանոյի գագաղի մօտ։

Մեծ շուքով կատարվեց Սան-Զուլիանոյի թաղումը։

Հեղինակաւոր աղբիւրից տեղեկացնում են, որ արտաքին գործերի մինիստրութիւնը Սալանդրան կառավարելու է մինչև պատերազմի վերջը։

ՈՒՐՄԻԱ.—Վերադարձաւ այն զօրամասը, որ վճռական միջոցներով վերականգնեց կարգ ու կանոնը Թերգէվէրում և Մերգէվէրում։ Բոլոր քիւրդերը փախել են Թիւրքիա. փախչելու ժամանակ զօրամասի ձեռքն ընկած քիւրդերը մահացված են։ Մեզանից վիրաւորվել են երեքի հոգի։

ՅԱՐՍԿՕԷ-ՍԷԼՕ.—Գահաժառանգ Աբքայորդու անուանակոչութեան օրը Թէօդորովսկի տաճարում մատուցվեց պատարագ և կատարվեց մաղթանք, որին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Թէօդորովնան Օգոստափառ Զաւակների հետ, Կայսրուհի Մարիա Թէօդորովնան, Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնան և Մեծ Իշխան Պաւէլ Ալէքսանդրովիչը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մայրաքաղաքի եկեղեցիներում Գահաժառանգի անուանակոչութեան առիթով մատուցվեց պատարագ և կատարվեց մաղթանք։ Առանձնապէս հանդիսաւոր էր պատարագը Կազանի տաճարում, որ մատուցին սինոդի անդամները Վլադիմիր միտրոպոլիտի գլխաւորութեամբ։ Ներկայ էին մինիստրները, Պետական Խորհրդի անդամներ, բարձրատիճան զինուորական և քաղաքացիական անձինք։

Պետ. Հեռ. Գործ. գանազան քաղաքներից ստացել է հեռագիրներ կատարված մաղթանքների և զօրահանդէսների մասին։ Հանդիսաւոր մաղթանքներ կատարվել են նաև Լվովում և Կոպէնհագէնում։

ՍՕՖԻԱ.—Բէկոտոն եղբայրները «Մէր» լրագրին հեռագրով երախտագիտութիւն են յայտնում ցաւակցական հեռագիրներ ստանալուն համար, յայտնելով որ «Թիւրքերը կամենում էին մեզ սպանել այն պատճառով, որ մենք պաշտպանում էինք Բոլգարիային՝ Մակեդոնիան Թիւրքական բռնակալ լծից ազատելու ձգտման մէջ»։

ԲՐԻՆԴԻԶԻ.—Լուսադ-փաշան տեղեկացրեց Սերբիային, որ նա ընտրվել է ալբանական սենատի նախագահ և Ալբանիայի զօրահրամանատար, և միաժամանակն վստահեցրեց սերբերին, թէ նա բարեացակամ է տրամադրված դէպի նրանց, և յայտնեց, որ իր հովանաւորութեան տակ է առնում Ալբանիայում գտնվող սերբերին։

ԿՕՊԻՆՀԱԳԷՆ.—«Բերլին-Տագ.»-ի ասելով, Մեծ-Բրիտանիան զիջել է Բէլգիային պատերազմի ժամանակ Դէրնսէյ կղզին (Նօրմանդեան կղզիներից մէկը), ուր բելգիական կառավարութիւնը կարող կը լինի իրականացնել իր պետական-իրաւական գործունէութիւնը։

ՍՕՖԻԱ.—Բոլգար կառավարութիւնը հաղորդում է, որ Ցունսատանը ժանտախտից բարեյաջող է, սանիտարական միջոցները վերացված են, Ցունսատանից եկող ճանապարհորդները բժշկական քննութեան են ենթարկվում Բոլգարիա մտնելու ժամանակ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, հոկտ. 5-ին, ցերեկվայ ժամը 12-ին, կայացաւ Հայ Դրամատ. Ընկ. անդամների ընդհանուր ժողովի շարունակութիւնը, նախագահութեամբ Հ. Առաքելեանի։ Քարտուղար ընտրվեց Գր. Վարդանեան։

Այս անգամ հաւաքվել էին բազմաթիւ անդամներ և նոյնչափ բազմաթիւ հանդիսականներ։

Նախորդ նիստերի արձանագրութիւնները կարդացվելուց և հաստատվելուց յետոյ, մի քանի նկատողութիւնների հետ միասին, նախագահը յայտնեց, որ օրակարգի առաջին խնդիրն է Ընկերութեան վարչութեան անդամներ Արամ Նազարէթեանի և Գար. Երիցեանի գործի առիթով կայացած միջնորդ դատարանի որոշումը։

Ինչպէս յայտնի է, այս տարվայ մայիսին կայացած մի ընդհանուր ժողովի ժամանակ, երբ Գ. Երիցեան ընտրվեց վարչութեան անդամ, վարչութեան անդամներից երկուսը (Գ. Ծուրինեան, Ց. Զմշկեան) յայտնեցին, որ չեն կարող պաշտօնավարել Գ. Երիցեանի հետ միասին, իսկ մի այլ անդամ (Ալ. Խատիսեան) յայտնեց, որ մինչև որ Գարեգին Երիցեանը չարդարացնի իրան այն մեղադրանքներից, որոնք բարդվում են նրա վրա, նա ևս չէ կարող պաշտօնավարել նրա հետ։ Յաջորդ ժողովում վարչութեան մի այլ անդամ՝ Ա. Նազարէթեան ներկայացրեց գրաւոր պատճառաբանեալ հրաժարական, ամբաստանելով Գ. Երիցեանի գործի առիթով կայացած միջնորդ դատարանի որոշումը։

Ինչպէս յայտնի է, այս տարվայ մայիսին կայացած մի ընդհանուր ժողովի ժամանակ, երբ Գ. Երիցեան ընտրվեց վարչութեան անդամ, վարչութեան անդամներից երկուսը (Գ. Ծուրինեան, Ց. Զմշկեան) յայտնեցին, որ չեն կարող պաշտօնավարել Գ. Երիցեանի հետ միասին, իսկ մի այլ անդամ (Ալ. Խատիսեան) յայտնեց, որ մինչև որ Գարեգին Երիցեանը չարդարացնի իրան այն մեղադրանքներից, որոնք բարդվում են նրա վրա, նա ևս չէ կարող պաշտօնավարել նրա հետ։ Յաջորդ ժողովում վարչութեան մի այլ անդամ՝ Ա. Նազարէթեան ներկայացրեց գրաւոր պատճառաբանեալ հրաժարական, ամբաստանելով Գ. Երիցեանին մի շարք վեղծումների մէջ։ Ի պատասխանի այդ մեղադրանքների Գ. Երիցեան յայտնեց, որ նա թէև ընտրվել է վարչութեան անդամ, բայց ժամանակաւորապէս հրաժարվում է անդամութիւնից՝ մինչև որ իր վրա բարդված մեղադրանքներ գործը քննվի միջնորդ դատարանի միջոցով։ Այդ հիման վրա ընդհանուր ժողովը յանձնարարեց վարչութեանը շարունակել իր պաշտօնավարութիւնը, առանց Գ. Երիցեանի, մինչև միջնորդ դատարանի որոշումը։

Ահա այդ որոշումն էր, որ այժմ առաջարկվեց ընդհանուր ժողովին։

Միջնորդ դատարանը, բաղկացած 5 հոգուց, քննելով կէտ առ կէտ Ա. Նազարէթեանի կողմից եղած մեղադրանքները Գ. Երիցեանի դէմ, եկել է այն եզրակացութեան, որ թէև Գ. Երիցեանի գործողութիւնների մէջ կան անփութութիւններ, անկօրեկտութիւններ, թէև նա գործել է մի քանի դէպքերում ինքնագլուխ, առանց վարչութեան որոշման, բայց այդ ամենը չէ կրում այնպիսի ընաւորութիւն, որ կարելի չը լինի նրա համար մնալ վարչութեան կազմի մէջ. միւս կողմից դատարանը գտնում է, որ Ա. Նազարէթեանը, մեղադրելով Գ. Երիցեանին, գործել է բարեխղճօրէն՝ ուղենալով իր ձեռքի տակ որոշ փաստեր, բայց ծանօթ չը լինելով այն փաստերի հետ, որոնք յետոյ երևան են եկել դատավարութեան ընթացքում։

Ժողովականներից ոմանք—Շիրվանզադէ, Ամբահեան, Ց. Մալխասեան և այլք—գտնում են, որ դատարանի վճիռը պարզ չէ և դրական ոչ մի որոշումն չէ պարունակում. դուրս է գալիս, որ Գ. Երիցեանը և մեղաւոր է և մեղաւոր չէ։ Այս հարցի շուրջը ծագում են վիճաբանութիւններ, որոնք հետզհետէ սուր և կրքոտ կերպարանք են ստանում, այնպէս որ նախագահը մեծ ջանք է գործ դնում պահել ժողովը հարցը քննութեան սահմաններում։ Ժողովի ծանր դրութիւնը մի քիչ թեթևանում է, երբ առաջինը Ա. Նազարէթեան և ապա Գ. Երիցեան յայտնում են, որ իրանք հրաժարվում են վարչութեան անդամութիւնից։ Ա. Նազարէթեան իր հրաժարականը պատճառաբանում է նրանով, որ ինքը հէնց սկզբից յայտնել է, թէ պաշտօնավարել միասին Գ. Երիցեանի հետ միևնոյն վարչութեան մէջ չէ կարող, և քանի որ միջնորդ դատարանի վճիռը հնարաւորութիւն է տալիս Գ. Երիցեանին մնալ վարչութեան մէջ, նա ինքը հրաժարվում է։ Գ. Երիցեան յայտնում է, որ այժմ, երբ դատարանի որոշումը վերականգնում է նրա պատիւը, նա հրաժարական է տալիս, չը կամենալով խանգարել վարչութեան միւս անդամների գործունէութիւնը։ Ժողովի մէջ հարց է ծագում, թէ ինչ դիրք են բռնում վարչութեան այն անդամները, որոնք յայտնել էին, թէ իրանք չեն կարող պաշտօնավարել Գ. Երիցեանի հետ, արդեօք մնում են իրանց պաշտօնում թէ նոյնպէս հրաժարվում են Ա. Նազարէթեանի պէս։

Ալ. Խատիսեան յայտնում է, որ ինքն իր կողմից այս բօյէին վճռել այդ հարցը չէ կարող, որովհետև միջնորդ դատարանի ասնորոշ վճիռը չէ տալիս նրան հնարաւորութիւն իմանալ արդեօք Գ. Երիցեանի վրա բարդված մեղադրանքներից նա մաքուր է դուրս եկել թէ ոչ. երբ նա կը ծանօթանայ դատարանի վճռի հետ մանրամասնօրէն, այն ժամանակ միայն կը յայտնէ իր բռնելիք դիրքը։

Նախագահը յայտնում է, որ նախորդ ընդհանուր ժողովը որոշել էր, որ վարչութիւնը շարունակէ իր պաշտօնը մինչև միջնորդ դատարանի որոշումը. այժմ պէտք է, որ վարչութիւնը դրականապէս յայտնէ իր որոշումը, թէ մնում է պաշտօնի մէջ թէ ոչ. ուստի աւելի լաւ է յետաձգել ընտրութիւնները և միջոց տալ վարչութեան մինչև առաջիկայ կիրակի որոշել իր բռնելիք դիրքը։

Գ. Երիցեան յայտնում է, որ եթէ վարչութեան միւս անդամները չեն հրաժարվում, ինքն ևս ետ է վերցնում իր հրաժարականը։

Ս. Թառայեան մի յուզված ճառով բացատրելով, որ թէ Ա. Նազարէթեան և թէ Գ. Երիցեան գործունեայ և օգտակար անդամներ են, առաջարկում է երկուսին ևս խնդրել մնալ իրանց պաշտօնում։

Ժողովը նորից աղմկվում է և կրքերը յուզվում են։ Վարչութեան անդամներ՝ Ալ. Խատիսեան, Գ. Ծուրինեան, ինչպէս և ժողովականներից շատերը հեռանում են ժողովից, այնպէս որ ժողովի մէջ մնում են ընդամենը 35 հոգի։

Ի վերջոյ, երկար վիճաբանութիւններից և առաջարկված զանազան բանաձևերից յետոյ, ընդունվում է ժողովականներից մէկի առաջարկը, որ, անկախ Գ. Երիցեանի հրաժարականից, ժողովը արտայայտէ իր վերաբերմունքը միջնորդ դատարանի որոշման առիթով, թէ արդեօք Գ. Երիցեանը կարող է առհասարակ այդ որոշումից յետոյ մնալ վարչութեան կազմի մէջ թէ ոչ։

Նախագահը գաղտնի քուէարկութեան է ենթարկում այդ առաջարկը։ Ձեռնպահութեամբ 5 անդամների, ժողովը 26 ձայնով ընդդէմ 4-ի որոշում է, որ Գ. Երիցեանը կարող է մնալ վարչութեան կազմի մէջ։

Այս որոշումը յայտարարելուց յետոյ Գ. Երիցեան յայտնում է նախագահին, որ այժմ, երբ իր վարկը վերականգնված է, ինքն հրաժարվում է վարչութեան անդամ քուէարկվելուց և այս անգամ իր տուփը չէ դնելու։

Նախագահը, յայտնելով որ ժողովի շարունակութիւնը կը լինի յաջորդ կիրակի, փակում է նիստը ժամը 4-ին։

Եթէ վարչութեան անդամները (Ալ. Խատիսեան, Գ. Ծուրինեան, Ց. Զմշկեան և Ա. Նազարէթեան) գտնեն, որ այլևս պատճառ չը կայ հրաժարվելու, քանի որ Գ. Երիցեան ինքնայօժար կերպով հեռանում է վարչութեան անդամութիւնից, ուրեմն յաջորդ նիստում պէտք է կատարվի միայն վարչութեան մի անդամի ընտրութիւն. իսկ եթէ նրանք որոշեն հեռանալ, ուրեմն պէտք է կատարվի 5 անդամի ընտրութիւն։

ԴՕԿՏՕՐԻ ԱՍՏԻՃԱՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

—

Գուցէ մեր հասարակութեան ուշադրութիւնից վրիպեց մայրաքաղաքների թերթերի հաղորդած այն լուրը, թէ գերմանական արևելեան բանակի զօրահրամանատար գենրալ Գինտենբուրգը ընտրված է պատուաւոր դոկտոր Կեօնիկսբերգի համալսարանի բոլոր չորս ֆակուլտէտներում։

Դա աշխարհիս համալսարանների պատմութեան մէջ առաջին դէպքն է, որ մի գենրալ կուռի դաշտում ստանում է դոկտորի աստիճան։

Մինչև հիմա դոկտորի կոչումը համարվում էր գիտական աստիճան և երբէք ոչ մի գիտական հաստատութիւն գիտական կոչումով չէր պարգևատրել պատերազմական քաջարիութիւնը. մինչև հիմա գիտութիւնը համարվել է մի ազատ միջավայր, անկախ օրէնքներից, քաղաքականութիւնից, պատերազմից. նա եղել է միայն լոյս սփռող, միայն լուսաւորող, միմիայն քաղաքակրթող, և գիտական աստիճաններ են կրել միմիայն մարդիկ, ստեղծագործութեան մշակներ։

Եթէ մի քանի ամիս սրանից առաջ մեզ ասէին, որ ամեն բան աւերող, քաղաքակրթութիւնը, մարդկային կեանքը, ժողովուրդների բարեկեցութիւնը ոչնչացնող բռնի ոյժը պաշտամունք կը դառնայ նաև գիտութեան տաճարներում, որ աւերող ոյժը գիտական ստեղծագործութիւնների շարքը կը դասվի, մենք կը հրաժարվէինք հաւատալ։

Գերմանիան արհամարհելով, ոտնատակ տալով իրաւունքի, ազատութեան, քաղաքակրթութեան հիմունքները՝ ոտնատակ տուեց նաև գիտութիւնը։

Գենրալ Գինտենբուրգի պատերազմական քաջարիութիւնը գիտական աստիճանով պարգևատրվելը չը պէտք է յանկարծակի բերէր ոչ ոքի։ Մեր հասարակութեան ամեն մի դիտող, քննադատօրէն մտածող անդամ վաղուց պէտք է նկատած լինէր, որ գերմանական գիտութիւնը յանձին իր համալսարանների կորցրել է իր վաղեմի լրջութիւնը։

Այդ նկատելի է նոյն իսկ գերմանական կրթութիւն ստացած հայ մտաւորականների շրջանում։

Մի 30—40 տարիներ սրանից առաջ գերմանական համալսարանների դոկտորի աստիճաններով մենք ունէինք մի շարք մտաւոր մեծ պաշարով, լուրջ, պատրաստված ոյժեր (Գր. Արծրունի, Աբգար Յովհաննիսեան և միւս.)։ Այժմ, ամեն տարի Կովկաս են վերադառնում Գերմանիայից, դոկտորի աստիճաններով, մեր թեմական դպրոցների և Գէորգեան ճեմարանի նախկին սաները. մեծ մասամբ սեր սպիտակից չը ջոկող այդ երիտասարդները, մի քանի տարի ուսանելով Գերմանիայում (եթէ չեմ սխալվում՝ 3—4 տարի միայն), վերադառնում են հայրենիք դոկտորի գիտական կոչումով։

Եւ ոչ օքի համար գաղտնիք չէ, որ մեր «փիլիսոփայութեան դոկտորները» իրանց սահմանափակ աշխարհահայեցողութեամբ միայն տարակուսանք են զարթեցնում գիտակից մարդու մէջ։ Խօսքս, ի հարկէ, այն յարգելի բացառութիւնների մասին չէ, որոնք աչքի են ընկնում իրանց լուրջ պատրաստութեամբ։

Ամեն մի գիտակից, քննադատօրէն մտածող մարդու համար պարզ պէտք է լինի, որ դոկտորի աստիճանը շատ հեշտ է թրխվում գերմանական համալսարանում, հայ հասարակութեանը մատակարարելով բազմաթիւ կիսախելիգնտ «դոկտորներ»։

Գիտական աստիճաններ պարգևելու գործը անպայման աւելի լուրջ է դրված ռուսաց համալսարաններում։ Ռուսաստանում համեմատաբար հեշտ է ստացվում բժշկականութեան դոկտորի աստիճանը, բայց միւս բոլոր գիտութիւնների շրջանում դոկտորի աստիճան ստանալու համար ահագին էրուդիցիա է պահանջվում. ռուսաց համալսարանները միայն գիտնականներին, պրոֆեսորներին են դոկտորի կոչում տալիս. իսկ Գերմանիայում, ինչպէս տեսնում էք, երբէվայ մեր թեմականը աւարտածը՝ վաղը արդէն դոկտոր է։

Ահա ինչու աշխարհ չը պէտք է զարմացնէ պատերազմական գործունէութեան պարգևատրելը Գերմանիայում «դոկտորի» գիտական կոչումով։

Սոֆիա Դանիէլ-Բէկ

ՄԵՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՒ ԳԻՒՂԸ

—

Մեծ քաղաքները նման են ծովերի, միջինները՝ գետերի, փոքրերը՝ գետակների, աւանները՝ վտակների, իսկ գիւղերը անբսպառ, մշտահոս աղբիւրների։ Զը լինէին այդ

աղբիւրները, գոյութիւն չէին ունենայ և ծովերը։

Գիւղը, հաւատարիմ իր կոչմանը, շարունակ արտադրում է առողջակազմ, կեանքի ամեն չարքաշութիւն տանող, մշակութեան պահանջի անդամներ, իսկ շատ դէպքերում և ուսումնական, յայտնի գործիչ ոյժեր։

Նա արտադրում է և ամեն տեսակ բուսական ու կենդանական արդիւնաբերութիւն, որպիսի արդիւնաբերութեանց ընտիրները, պիտանին, նա քաղաք է տանում քաղաքացիների սեղանները զարդարելու, իսկ ինքը գործ ածում մնացորդները։

Գիւղացին պատահած քաղաքացի հիւրին պատւում է իր ունեցած ընտիր, լաւ-լաւ բաներով։ Նա համոզված է, որ, առ հասարակ, քաղաքացին խելքով իրանից շատ բարձր է, հեռատես միշտ էլ մի առանձին յարգանք է տածում դէպի քաղաքը և քաղաքացին գիւղը. գիւղացին էն գլխից եղել է նրա մշակը, նրա արդիւնաբերողը, նրա ոյժերի թարմացնողը և այսուհետև էլ գիւղը, հաւատարիմ իր սկզբունքին, միշտ էլ պիտի ընթանայ նոյն շաւղով։ Գիւղը տուել է և մեծ թւով ուսանողներ, որոնք իրանց ստացած կրթութիւնով ու սովորած մասնահիւղով հնարաւորութիւն չեն ունեցել գիւղ վերադառնալու, իսկ որոնք էլ որ հնարաւորութիւն են ունեցել գիւղերին և գիւղացիներին օգտակար լինել, նրանցից էլ շատ քչերն են բարեհաճել իրանց խաւարում խարխափող եղբայրներին օգնութեան գալ։ Միայն գիւղական ուսուցիչներն են, որ, հաւատարիմ իրանց կոչման, ժիր մշակի պէս հերկում են կեանքի խոպան անդաստանը։ Սակայն գիւղը, գիւղացիութիւնը, այդքան պիտանի, էական ֆակտոր լինելով հանդերձ, մեր քաղաքացի հարուստ դասակարգը, նրա հետ և մեր հասարակական գործիչները շատ աննշան հոգատարութիւն են ցոյց տալիս դէպի գիւղն ու գիւղացիները։ Մեր հարուստները առատ են եղել քաղաքների թէ եղած հաստատութիւններին նուիրաբերելու և թէ նոր կուլտուրական հաստատութիւններ հիմնելու։ Մի Մանթաշեան—փառք նրա անուան—մենամենակ մօտ 300,000 ր. նուիրաբերեց Ներսիսեան դպրոցին. համեմատական չափով և մեր միւս բարերարները։ Բայց երբ հայ ազգային մեծ տունը հրապարակ գալով, նրա յաւերժացման համար, դպրոցական ֆոնդը մէջտեղ դրվեց, երբ հասել էր ըսպէն՝ գիւղերին օգնութեան գալու, իրանց մշակ, գեղջուկ, խաւարում խարխափող եղբայրների մատաղ սերնդին տարրական կրթութիւն տալու գործը, այդտեղ նրանք ժլատացան և բաւականացան փըշրանքներ շպրտելով, իսկ մեր ինտելիգենցիան բաւականացաւ միայն ս. Մեսրոպին, Սահակին գովեստներ կարդալով և մեզնից բարձր ազգերի աչքերին թոզ փչելով, թէ «տեսնէք, մենք էլ քիչ է մնում, որ ձեզ հասնենք»... Այո, մենք միայն մեռոնների վրա ողբալ գիտենք և ինքնախաբ կերպով մենք մեզ արտաքին փայլ տալ։

Ա՜յ գիւղացի եղբայր, եթէ ուզում ես, որ քաղաքացին, հարուստը քեզ էլ մարդու տեղ դնի, չընկճվես, ինչ գնով և լինի՝ հիմնիր դպրոց, վարժարան ուզարկիր քո որդոց։ Եփրեմ Վարդանեան

Մեղրի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կնաճոր գիւղում

Ախտալա կայարան, 4 հոկտ.

Երէկ երեկոյեան մօտակայ Շնող գիւղում հրացանով վառուցաւոր կերպով կըրծքից վիրաւորված է նոյն գիւղացի Բագրատ Փարսադանեանը, որը տարիներ առաջ վարել է տանուտէրի պաշտօն։ Վիրաւորվածին այսօրվայ գնացքով տարան Թիֆլիս՝ բժշկական օգնութիւն հասցնելու։

Ով կամ ինչ պատճառից դրդված կատարել է այդ քստմնելի մահափորձը, առ այժմ յայտնի չէ։

Շնող գիւղի իր պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացրած Գր. Քօչինեանի փոխարէն անցեալ կիրակի նոր տանուտէր է ընտրվել Յով. Փարսադանեանը, իսկ նրա օգնական՝ Շամ. Մկրտումեանը։

Շրջակայ գիւղերում աշնանավարը սկսված է, իսկ եղանակները անձրևային են և նպաստաւոր ցանքերի համար։ Եօլչի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՅԱՒԱԼԻ ՎԻՃԱԿԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄՈՒՄ

Եթէ մենք ուշի-ուշով քննելու լինենք Ղարաբաղի արդի ուսումնական գործի վիճակը, եթէ հետաքրքրվենք, թէ ինչպէս է տարվում Ղարաբաղի պէս մի լայնածաւալ թեմի կրթական-դաստիարակչական գործը, կը գանք շատ տխուր եզրակացութեան։

Շրջեցէք Ղարաբաղի գիւղերը և ականատես կը լինէք հետևեալ դրութեանը։

Մի տեղ գիտակից անհատների ջանքերով բացված ուսումնարանի վարկը ապիկար ուսուցչի շնորհիւ ընկած և ուսումնարանը փակվելու վտանգի մէջ. մի ուրիշ տեղ ազգէտ հոգաբարձուների անփութութեանը զոհ գնացած՝ ուսումնարանը. մի երրորդ տեղ՝ ինարիգան տարրերի շահամոլութեան և օտարամոլութեան շնորհիւ ծխ. ուսումնարանը տեղի տուած մինիստրականի...

Այս տխուր երևոյթների վերաբերմամբ որքան էլ մեղադրենք տեղական տարրին իր անտարբերութեան համար, այնու ամենայնիւ առաւել չափով այս խնդրում մեղաւոր են մեր ուսումնարանների տնօրէնները, այս դէպքում հոգևոր վարիչները։

Ի՞նչ են մտածում արդեօք այն անձինք, որոնց իրաւասութեանն է յանձնված մեր թեմի դպրոցների ղեկը, երբ թեմի դպրոցները գտնվում են հոգեվարք դրութեան մէջ։

Ասենք՝ ուսումնարանների փակվելու պատճառը ժողովրդի տգէտ և ինքնագիտակցութիւնից զուրկ լինելն է, մի հանգամանք, որ ամենամեծ չարիքն և խոչընդոտն է հանդիսանում առհասարակ՝ ժողովրդի առաջադիմութեան վերաբերմամբ, որը և մենք պարտաւոր ենք խոստովանել։ Բայց միթէ պէտք է թողնել, որ տգիտութիւնը ընդմիշտ իր աւերածութիւններն անէ. չը պիտի արդեօք ձեռնարկել գոնէ ներշնչման եղանակով գիտակցութեան բերել մայրենի լեզուի ուսուցման նշանակութիւնը չը հասկացող ռամիկ գեղջուկին։

Եւ այս՝ ինքնագիտակցութեան բերելու գործում՝ որքան մեծ դեր է վերապահված թեմի առաջնորդին, որը իր հեղինակաւոր դիրքով մեծ ազդեցութիւն կարող է ունենալ ռամիկ ժողովրդի վրա։

Եթէ մտածենք, որ՝ մեր գրերի գիւտը դեռ V դարում արդիւնք է երկու եկեղեցական ժրաջան գործունէութեան, եթէ մըտածենք, որ դարեր շարունակ ազգի առաջադիմութեան գործով զբաղված եկեղեցականներն են հանդիսացել միակ ֆակտորը՝ մեր կուլտուրապէս զարգանալուն, ապա պարզ է՝ թէ ինչպիսի՞ բարոյական պարտք ունեն կատարելու մեր ներկայիս հոգևոր վարիչները ուսումնական գործի վերաբերմամբ։

Զենք ժխտում Ղարաբաղի թեմի ներկայ կառավարիչ Զաւէն վ.-ի գործունէութիւնը, որը ցոյց տուեց թեմ. դպրոցի նիւթականը ապահովելու վերաբերմամբ իր հանգամանութեամբ, որը արժանի է ամենամեծ շնորհակալութեան։ Բայց արդեօք չէ՞նվ բացատրել, որ թեմի ուսումնարանների անընդմեջ դրութիւնը շարունակվում է առաջվայ նման։

Այո, ծանր և յուսահատեցուցիչ է Ղարաբաղի թեմի ուսումնական գործի վիճակը, որը պահանջում է խորին ու սրտացաւ ուշադրութիւն։ Ա. Ասլանեան

Խանքենդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Կիրակի, հոկտեմբերի 5-ին, Մանթաշեան առևտրական դպրոցում, ուսուցիչների և աշակերտների արտայայտած հաւատարիմ հպատակութեան զգացմունքների առիթով Նորին Կայսերական Մեծութիւնից ստացված Բարձրագոյն շնորհակալութեան պատճառով, հանդիսաւոր մաղթանք կատարվեց, որին ներկայ էին, բացի ուսուցիչներից և աշակերտներից, հոգաբարձական խորհրդի անդամները, նախագահ Ա. Ն. Մելեանի գլխաւորութեամբ, Թիֆլիսի վաճառականական բանկի կառավարիչ Վ. Օ. Տէր-Զաքարեան։ Նորին Մեծութեան հեռագրի ընթերցումը ընդունվեց «ուրաներով», որից յետոյ երգվեց ռուսական ժողովրդական հիմնը։

✦ «Աղբիւր-Տարազիր» խմբագիր Տիգրան Նազարեանը, որ ամառս գտնվում էր Շվեյցարիայում, վերջերս մեկնել է այնտեղից և 24 օր անընդհատ ճանապարհորդելուց յետոյ երէկ հասաւ Թիֆլիս՝ Ֆրանսիայի, Ցուռնատանի և Բոլգարիայի վրայով։

✦ Հասարակական ակումբը մտադիր է հոկտեմբերի 18-ին մի երեկոյթ կազմել, որի զուտ արդիւնքը յատկացվելու է պատերազմից վնասվածների օգտին։ Այդ երեկոյթին Ի. Ֆ. Սեմիոնով մի դասախօսութիւն է կարդալու ռուսերէն լեզուով՝ «Начало войны и ея значеніе» թեմայով։

✦ «Սպիտակեղէնի շաբաթվայ» համար պատրաստութիւններ են տեսնվում քաղաքում։

✦ Մի շաբաթ շարունակ տեղացող անձրևների հետևանքով Կուր գետը բաւականին վարարել է։

✦ Ժողովրդական Տան վրայ դրամատիկական խմբակցութիւնը մի ամիս ժամանակով իր ներկայացումների օրերը զիջել է վրաց այրված թատրոնի դերասանական խմբին ներկայացումներ տալու։

✦ Վօրօնէժ քաղաքի՝ վիրաւոր և հիւանդ զօրականներին խնամող հասարակական-մանկավարժական կազմակերպութիւնը դիմել է Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ., խնդրելով ուղարկել վրացերէն թերթեր և գրքեր վիրաւոր վրացի զօրականների համար։ Ընկերութեան վարչութիւնը անմիջապէս Վօրօնէժ ուղարկեց գրքեր ու թերթեր և այժմ որոշել է գրախանութներին կից հանգանակութիւն բանալ գրքերի և թերթերի համար, որոնք ստացվելով իսկոյն ուղարկվելու են օտար քաղաքների վնաս. հիւանդանոցներում գտնվող վրացի վիրաւոր զօրականներին։

✦ Քաղ. վարչութեան հողաչափական բաժանմունքը մի նախագիծ է կազմել Նաթլուղում նոր ճանապարհ անցկացնելու մասին։

✦ Նահանգապետը, ոգևոր խմբիչներ վաճառելու համար, տուգանքի է ենթարկել օղեվաճառ Ս. Հաջի-Մահմուդովին 200 ր., Ց. Ղուկասեանին 100 ր.։

✦ Սասունք Բազուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդի հրատարակած «Обзоръ бакинской нефтяной промышленности за 1913 годъ» I և II հատորները։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ «Рѣчь»-ի տեղեկով, Պետրոգրադում տեղեկութիւն է ստացվել, որ Պոլտավայում Վլադիմիր Կօրոլենկոյի ընտանիքին մեղադրական ակտ է յանձնվել Կօրոլենկոյին տալու համար։ Ակտը վերաբերում է, գրական դատավարութեան, որ կապ ունի Բեյլիսի գործի հետ։ Ինչպէս յայտնի է գրողը Ռուսաստանում չէ. նա մինչև այժմ գտնվում է Ֆրանսիայում, ուր գնացել է Գերմանիայից։

✦ Պետրոգրադում յամառ կերպով խօսվում է, թէ նոյեմբերի վերջերին կամ դեկտեմբերի սկիզբներին գումարվելու է Պետական Դուման առանձնապէս նոր հարկերի նախագիծը քննելու համար, որ անհրաժեշտ է ներկայ պատերազմական ժամանակ։

✦ Նախագծվում է աւելացնել Ռուսաստանում դեղատների սակագները։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

Հոկտեմբերի 5-ին Արքունական թատրոնում երրորդ անգամ ներկայացվեց «Մեր կեանքի օրերը» նոր օպէրան, որի նիւթը, ինչպէս յայտնի է, Լ. Անդրէեվի համանուն պիէսից է առնված։

Արդէն տեղական մամուլում ընդգծվեց բաւական որոշակի այս օպերայի չափազանց անտաղանդ ու աղքատ երաժշտութիւնը, որ բնաւ չէ համակերպվում պիէսի գործող անձանց ներքին ապրումների հետ։ Ընդհանուր տպաւորութիւնը այն է, որ երաժշտութիւնը բաւական արհեստականօրէն սաղացված է պիէսի դերերին, մինչդեռ Լ. Անդրէեվի «Մեր կեանքի օրերը», իբրև այդպիսին, այսինքն իբրև ժամանակակից դրամա իր ցանկալի ազդու տպաւորութիւնը միշտ էլ թողնում է տեսնողի վրա։

Ներկայացումից առաջ այդ օր երեկոյ օպերային խումբը օրկէստրի նուագածութեամբ երգեց «Տէր, պահեա զկայսրն մեր» օրհներգը երեք անգամ։ Ե.

Վրաց Թատրոն

Հոկտ. 3-ին Վրաց Դրամատիկական Ընկ. դերասանական խումբը Արտիստական Ընկ. շինութեան թատրոնում խաղաց Ն. Շիլուաշվիլիի մեր իրականութիւնից վերցրած «Սիմախինջէ» (այլանդակութիւն) 4 գործ. դրաման, որի համառօտ բովանդակութիւնն այն էր, որ պաշտօնական գրասենեակի պաշտօնեայ Թ. Զնելաձէի (Կօրիշէլի) ուսանող աղջիկ Սօնան (Զխէիձէ) նշանված է լինում ուսանող Վասօ Մէնարդէի (Ա. Իմէդաշվիլի) վրա։ Ուսանող Վասօն մի օր իր նշանած Սօնային երկար տատանումից յետոյ յայտնում է, որ ինքը անարատ չէ, կորցրել է ամուսնական սրբութիւնը և աղերսելով խնդրում է Սօնայից ներում։ Վերջինս ներում է, բայց միևնոյն ժամանակ յայտնում, որ ինքը Սօնան ևս զոհ դառնալով դաւաճան սիրողի կեղծ խոստումներին, անարատ չէ, նոյնպէս զրկված է ամուսնական սրբութիւնից և իր հերթին խնդրում է Վասօյից ներում։ Սակայն մի քանի րոպէ առաջ նոյնպիսի յանցանքի համար Սօնայից ներում ստացած Վասօն մէջ բերելով կնոջ և մարդու միջև գոյութիւն ունեցող զգացմունքների տարբերութիւնը կարուկ կերպով մերժում է և հեռանում, այլևս նրա հետ չամուսնանալու մաքով։ Հետևանքը լինում է այն, որ Սօնան իր ջախջախված բաղդը կապում է սապատաւոր, այլանդակ արտաքինի տէր հարուստ Սաբայի (Զաքարեշվիլի) հետ, որը վաղուց աչք է ունեցել Սօնայի վրա, սակայն վերջինս միայն զզուանքով է պատասխանելիս եղել։ Իսկ այժմ համաձայնվում է, «միմիայն այն պայմանով, որ Սաբան ոչնչացնէ այն բոլոր մուրհակները, որոնք Սօնայի հօր պարտքի դիմաց գտնվում են Սաբայի գրպանում։ Սաբան համաձայնվում է և պակադրութիւնը տեղի է ունենում, որը և վերջանում է նրանով, որ Սօնան առաջին գիշերն իսկ դուրս սողալով իրան դէպի ինջարան առաջնորդող Սաբայի ճանկերից՝ սիրտ կըտրատող հեծկլտոց բարձրացնելով հասնում է առաջուց թագցրած տարճանակին և նոյն զզուելի ինջարանի շեմքում վերջ տալիս իր կեանքին։

Դերասանական խմբի անդամները, որ բարեխղճութեամբ ուսումնասիրել էին իրանց ստանձնած դերերը, աջողութեամբ աւարտեցին ներկայացումը, որև արժանացան հասարակութեան բուռն ծափահարութիւններին և օվացիաներին։ Թատրոնը լիքն էր, բայց ոչ բոլորովին։ Շնորհիւ կանոնաւոր ընդմիջումների՝ ներկայացումը վերջացաւ գիշերվայ ժամը 11-ին։

Թէ այս և թէ հոկտ. 2-ին նոյն թատրոնում տրված ներկայացումներից գոյացած արդիւնքը յատկացված է վրաց թատրոնական ներկայ սեզոնի կազմակերպման գործին։ Բ.

—

Ժողովրդական Տուն

Ժողովրդական Տանը հոկտ. 5-ին ռուս թատերասէրների խումբը մեծ աջողութեամբ խաղաց Գօրկնի «Սատանան»։ Սովորականի նման աչքի ընկան գերասան Շուլգինն, սիրողներ Իրանովի, Օսիպով, տ. Երմոլաէվա և այլն։

Թատրոնը լի էր։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 3 հոկտ.

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան հայկական հիւանդանոցի համար ստացվել են հետևեալ նուիրատուութիւնները. Թիֆլիսի վաճառականական բանկի վարչութիւնից 1000 ր., Թիֆլիսի ժողովարանից լոսոյի արդիւնքից՝ 180 ր., Դ. Զ. Ալղազանեանից՝ 24 հ. շապիկ, 24 հ. վարտիկ, 6 հ. ֆուֆայկա, 24 հ. գուլպա, 24 հ. երեսսրբիչ, Դր. Սա. Մեսանիկեանից գրասենեկային պիտոյքներ 15 ր. արժողութեամբ, Կոլիայից և Էլիկայից՝ 3 բուրլի։

Խորհուրդ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Կացութիւնն Ատրպատականում

Թաւրիզ, 28 սեպտ.

Համխալամիզմը ընդհանրացնելու մտքը թիւրքերի կողմից նորութիւն չէ. դրան ուժգին թռիչք տուողն եղաւ թիւրքաց նախկին սուլթան տխրահռչակ Համիդ, համասփիւռ մահմեդականներից ապաղայում հսկայամարմին մի կայսրութիւն կազմելու խորունկ տենչով, որպէսզի մի գեղեցիկ օր մահմեդական գերիշխանութիւնը գաղթնակէտին հասած լինի...

Համիդ իր ժամանակին յատուկ էմիսարներ էր ուղարկում Հնդկաստան, Կովկաս, Պարսկաստան, Թուրքեստան և այլ կենտրոններ, ուր կային մահմեդական տարրեր, նրանց մէջ համախմբութիւն քարոզելու համար։ Համիդի այս ձեռնարկութիւնը իթթիհադի երիտասարդ-թիւրքերը յարգանքով ողջունեցին և մինչև վերջը աշխատանք չը խնայեցին նպատակի հասնելու մտքով. և համաեւրոպական պատերազմի հետ, կրկնապատկեցին իրանց ջանքերը. իսկ հիմա, երբ մահմեդական երկիրների միակ պաշտպանի հռչակ վայելող Գերմանիայի կայսր Վիլհելմին իթթիհադականները աղնիւ խօսք են տուել օգնել նրան՝ զէնք բարձրացնելով հանդէպ Ռուսաստանի կամ նրա դաշնակիցների, քարոզիչ էմիսարների ձեռքով տարածում են նաև գրդռիչ թռուցիկներ և բրոշիւրներ, ջհադի, այսինքն սրբազան պատերազմի կոչ անելով Պարսկաստանի և ուրիշ վայրերի մահմեդականներին ընդդէմ քրիստոնէութեան ընդհանրապէս։

Իմ գրածին շօշափելի փաստ կարող է ծառայել հետևեալ հեռագիրը, որ ուղարկել է Թաւրիզի յայտնի մուշտէիդ Հաջի Միրզա Հասան աղան Նաջաֆի մեծ մուշտէիդ աղա Սէյիդ Քեազըմին. միևնոյն ժամանակ յիշեալ հեռագրի օրինակները տպագրված յայտարարութիւններով սեպտ. 24-ին տարածվեցին հասարակութեան մէջ ի գիտութիւն, որի թարգմանութիւնը հաղորդում եմ «Մշակի» ընթերցողներին։

«Յայտնում եմ ի գիտութիւն ձերդ սրբութեան, որ Արաբստանից և Բաղդադից եկած մի քանի թերթեր ընդհանուր սրբազան պատերազմի կոչ են անում, որոնք պղտորում են մարդկանց սրտերը և մտքերը խանգարում։

«Ձեր սուրբ և լուսաւոր խղճին յայտնի է, որ այդպիսի վնասաբեր յայտարարութիւնները ներկայ պայմաններում իսլամի և Պարսկաստանի անկումն է նշանակում և դլխովին չարիք են հասցնում իսլամի մտաւոր կարողութիւններին։

«Կասկածից դուրս է, որ այդպիսով առաջ կը գայ իսլամական երկիրների վախճանը։ Դրա համար է, որ ձերդ սրբութեան վրա պարտականութիւն է ընկնում, դուք, որ իսլամ կրօնի հիմնաքարն էք, այդպիսի վնասակար հրատարակութիւնների առաջն առնել, որպէսզի իսլամական երկիրները ազատ մնան վնասակար մաքերից, և նրանց նուաճումի և արիւնհեղութեան չը մատնելով, ապահովութեան մէջ մնան»։

Ուրմիա քաղաքի շրջակայքում քիւրդ հրոսակախմբերը սարսափ են տարածում անընդհատ հրացանաձգութեամբ. ռուսաց զինուորական ոյժերը պաշտպանում են այդ վայրերը նրանց աւարառութիւններից։ Հաւաստի տեղեկութիւններ կան, որ քիւրդ աւազակախմբերին առաջնորդում է Էմիր Հիշմէթ ծանօթ յեղափոխականը։

Գերմանացոց մօտ եղող յայտնի թուրք աղա Կուլի Դէլալ-Բաշին (առևտրական մինիստր) իր 5-6 ընկերների հետ ձերբակալվեց կառավարութեան կողմից և աքսորվեց համագործակիցների հետ։ Աքսորվածները գաղտնի միտինգներ էին կազմում գերմանների խորհրդով և քարոզում ընդդէմ ռուսաց։ Ուղիղ

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Զօրօնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴՅԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Դ. ԱՂԱՍԵՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղեկային և երիկամոյց հիւանդութ. և ծանկահան.։

Մ. Մ. ԲՆԻՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—12—1 ժ. երիկ. հինդշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահան.։

ԿԻՆ-Բ.ԾԻՆԻ ՅԵՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲՆԻՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Ղաւասարդեան

1. 0—90

Ատամնաբուժարան

հիմնված ատամնաբոյժ

Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ

Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պլ. № 76

Բուժարանը բաց է հիւանդների համար **օրվայ ու գիշերվայ ամեն ժամին**։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։

Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ր. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։

Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են **ամեն տեսակ ատամ նա-տեխն։ կամակն ուխատաՑՒՆեր** և շատ վերանորոգումներ **3 ժամվայ ընթացքում**։

(օ. մ.) 755. 100—27

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Առաջին տարի 25 կ. ● Երրորդ տարի 40 կ.
Երկրորդ » 30 կ. ● Չորրորդ » 70 կ.

Գումարով գնողներին զեղչ։

Գլխաւոր պահեստները Թիֆլիսում՝ «Գիր» և «Գուտենբերգ» գրախանութներում։

Կազմողի հասցէն՝ Александрополь, Ов. Арабаджіанъ. (հ. կ.) 912. 3—3

Գիւղատնտեսական Բիւրո

Գիւղատնտեսութեանը եւ կօօպերացիային վերաբերող խորհուրդներով իրան դիմողներին ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Ընդունում է ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) առաւօտ. ժ. 8½-ից մինչև 10½-ը, երեկ. ժ. 5½-ից մինչև 7½-ը։ Թիֆլիսից դուրս եղած գրաւոր դիմումներին պատասխանվում է անմիջապէս. պատասխանի համար պէտք է ուղարկել 2 հատ 10 կոպէկանոց պօստային մարկաներ։

Հասցէն՝ Թիֆլիս, Бебутовская № 6.

(հ. հ. կ.) 921. 0—1

„Մշակի" խմբագրատանը վաճառվում են

հետեւեալ վիպական երկերը.

1) ԶՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՈՍԻՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդոյի, թարգ. Հ. Առաքելեանի— 60 կ.
5) ՏԱՄՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Ց. Սօլովեանի . . . . . — 40 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փոխադրական կ[illegible] խիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ։ Ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադարձվածով, պահանջողներին կը լինի միայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.

(5) 0—10

Հաշուապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

(ա.օ) Նիկոլայէվսկայա փող. 36. 863. 25—23

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный